

ԽՈՐԱԳՐԱԿԱՆ

ՄԱԿ-Ը, 9 ԳԵԿՏԵՄԵՐԸ
ԵՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ քաղաքական միտքը 9 դեկտեմբերին վրայ յատուկ ուշադրություն կտրուր և կհետևաբար կհարգի 9 դեկտեմբերը իբրև Յեղասպանությունների զոհերու յիշատակի օր ամրագրելը պաշտօնական Երեւանի ներկայացուցչության նախաձեռնությամբ Եր Դաշնի ցեղասպանության 100-ամեակին: Իրականում 100-ամեակի մեր դիմապատկան ծեղաբերումներն կարեւորագույն կարելի է նկատել 9 դեկտեմբերի ամրագրումը ՄԱԿ-ի մօտ: Հայկական դիմապատկան մարտավարությունը լիարժեք աշխատած է այս պարագային: Առանց նշելու Հայոց ցեղասպանությունը փաստօրէն բոլոր ցեղասպանություններու մէջ տարբերակ նաեւ հայոցը, համաշխարհային ոգեկոյման նուիրականացած օրան վերածուած է 9 դեկտեմբերը:

Դեկտեմբեր 9-ը, 1948-ին, Յեղասպանության յանցագործության կանխարգիլման եւ պատիժի մասին ՄԱԿ-ի համաձայնագրի ընդունման օրն է: Իսկ այս թուականը ուղղակիօրէն կ'առնչուի Ռաֆայէ Լեմբինի հետ, որ հեղինակն է ցեղասպանութիւն եզրին: Լեմբին իր եզրակերտումը հիմնաւորած պահուն իբրև առաջին օրինակ նշած էր հայերու պարագան: Պահելով հետեւողականության տրամաբանութիւնը, ուրեմն ոգեկոյման օրը նախ եւ առաջ կը ներառէ Հայոց ցեղասպանութիւնը Լեմբինի հանգամանքը նկատի ունենալով եւ քաղաքական ընթերցումով՝ Երեւանի կողմէ բանաձեւի առաջադրումի փաստը:

Հայկական դիմապատկան մարտավարութիւնը այնքան լիարժեք աշխատած է, որ բանաձեւի օգտին քուէարկած է նաեւ Թուրքիոյ ներկայացուցիչը: Աւելի'ն. ան ընդառնաք զայն է Երեւանի նախաձեռնության եւ դարձած բանաձեւի համահեղինակ:

ՄԱԿ-ի կողմէ ամրագրուած այս օրուն քաղաքական համաշխարհային հնչեղութիւնը վառ պահելու համար հայ քաղաքական դաշտը Երեւանէն մինչեւ տարբեր ցամաքամասեր, ուր հայկական կազմակերպ կենսը գոյութիւն ունի, առաջնային օրակարգ ձեւաւորելու հրամայականը կը շեշտուի:

Նշելով 9 դեկտեմբերը եւ ոգեկոյնով բոլոր ցեղասպանութիւններու զոհերուն յիշատակը, հայոց ցեղասպանության միջազգային հնչեղության ապահովման նոր նշանդրէր պահանջելու հաւանականութիւնները կը բարձրանան: Բանաձեւի որդեգրման մարտավարութիւնը դիմապատկանութեան քարոզարարական հարթութիւն տեղափոխելով կրնայ նոյնանման դրսեւորումներ ապահովել: Բոլոր ցեղասպանութիւններուն նշումով շահագործուած կ'ըլլան անշուշտ նախ ցեղասպանության զոհ զացածները: Իսկ այս բանաձեւին համահեղինակ պետութիւնները՝ թիւով 85, պատճառ չեն ունենար չմիանալու իրենց համահեղինակած բանաձեւի նշման նախաձեռնութիւններուն:

ՄԱԿ-ի մօտ նախաձեռնութիւնը հայկական էր: Նոյնպէս նաեւ անոր հանրահռչակման եւ մանաւանդ քարոզարարական միջազգային հնչեղութեան ապահովման համար հայկական կողմէն առնուած քայլերով համանախաձեռնողներու խումբեր կրնան կազմուիլ: Այդ բոլոր ձեռնարկներուն կը յիշուին բոլոր ցեղասպանութիւններու զոհ զացած ժողովուրդները:

9 դեկտեմբերը այսպիսով կրնայ դառնալ Հայոց ցեղասպանության զոհերու ոգեկոյնմանը զուտ հայկական նախաձեռնողական սահմաններէն դուրս բերելու եւ ոգեկոյնմաներուն միջազգային տարրողութիւն ապահովելու առիթ: ԶԷ բացառուած, որ ՄԱԿ-ը ի'նք ես նշէ իր իսկ կողմէ ամրագրուած է իր օրացոյցին մէջ իբրև միջազգային օր ձեւակերպուած Յեղասպանութիւններու զոհերու յիշատակի օրը:

9 դեկտեմբերը ձեւակերպուած է իբրև «Յեղասպանության յանցագործության զոհերու յիշատակի եւ արժանապատուության եւ այդ յանցագործության կանխարգիլման միջազգային օր»: Պաշտօնական Երեւանը հետեւողական է Յեղասպանության միջազգային ճանաչման առաջադրանքի հետապնդման մէջ շեշտելու ճանաչումը իբրև կանխարգիլում հետագայ ցեղասպանական փորձերու հիմնաւորումը:

Վշխարհագրական տարբեր միջավայրերու մէջ վերջին ժամանակներուն արձանագրուած ցեղային գտումի գործողութիւնները հետեւեց են ցեղասպանութիւններու անհետեանք եւ անպատիժ, անհատոյց մնալուն: Կանխարգիլումը իմաստ կ'ունենայ ցեղասպանին կողմէ նկատի ունենալով ո'չ միայն պատասխանատուութեան ընդունումը, այլ նաեւ հատուցումը: 9 դեկտեմբերը ուրեմն միջազգային ձեւակերպումով իսկ կը ներառէ հատուցման գաղափարը՝ կանխարգիլման անհրաժեշտութիւնը ընդգծելով:

Յեղասպանական փորձի կանխարգիլման փաստ արձանագրուեցաւ նաեւ Արցախի մէջ, երբ հայկական խաղաղ ցոյցերուն Պաքու հակադարձեց ջարդարար քաղաքականութեամբ: Սուււայիթ, Պաքու, Կիրովպատ, հասնելու համար ապրիլեան պատերազմի ընթացքին գործարկուած ռազմական յանցագործութեամբ յատկանշուած ամենէ վայրագ դրսեւորումները համոզեցին, որ Պաքուն չէ հրաժարած արցախահայութեան նկատմամբ ցեղային գտում իրականացնելու իր առաջադրանքին: Հայկական ինքնապաշտպանութիւնն էր, եւ ապա արդէն հայկական կանոնաւոր բանակը, որ զսպեց, ձախողեցուց եւ տապալեց Պաքուի կողմէ մշակուած ցեղասպանական քաղաքականութիւնը: Այս հիմնաւորումներով ալ ինքնորոշման իրանքի առնչեթ արցախահայութեան անվտանգութեան երաշխարկումը կը շարունակէ գերակայ ուղղութիւն մնալ իբրև արցախեան հակամարտութեան հանգուցալուծման հայկական հայեցակարգային հիմնարոյթ:

9 դեկտեմբերը առիթ է հայ քաղաքական միտքին համար այս բոլոր առաջադրանքներուն միջազգային հնչեղութիւն ապահովելու:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԱՅՍՕՐՈՒՄ
ԽՈՐՀՐԳԱՎՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԷԿ ՇԱՐՄԹՈՎ ՅԵՏԱԶԳՈՒԹՅԱՆ

Այսօր տեղի ունենալիք վարչապետի նշանակման պարտադիր խորհրդակցութիւնները մէկ շաբաթով յետաձգուեցան:



Նոր վարչապետի նշանակման առումով յաւելալ խորհրդակցութիւններու առիթ տալու նպատակով, հանրապետության նախագահ Գօր. Միշէ Անն որոշեց վարչապետի նշանակման պարտադիր խորհրդակցութիւնները մէկ շաբաթով յետաձգել: Հետեւաբար այդ խորհրդակցութիւնները պիտի կատարուին երկու շաբաթի, 16 դեկտեմբերին: Խորհրդակցութիւններուն ծրագիրն ու ժամագրութիւնները պիտի ըլլան նոյնը, այնպէս ինչպէս նախորդին համար ճշդուած էին:

Շաբ.ը՝ էջ 2

«ԺԱՄԱՆԱԿԸ Ե ՅՈՐԳԱՆԱՆԻ ՀՈՎԻՏԸ ԱՌՆԵԼՈՒ ԻՍՐԱՅԷԼԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ»

Կ'ԸՍԷ ՆԵԹԱՆԻԱՅՈՒ

Իսրայէլի վարչապետ Պենիախ Նեթանիահու յայտնեց. «Իսրայէլեան օրէնքը պետք է պարտադրէ Յորդանանի հովիտին վրայ եւ օրինականացնել բոլոր քնակեցման վայրերը»: Ան նաեւ սպառնաց Կազայի մէջ «մեծ գործողութիւն մը» կատարել, եթէ հրթիռարձակումները չդադարին:



Շաբ.ը՝ էջ 3

«ԱՅՍՕՐ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԶԳՈՒՇԱՍՄԱՆ ԱԶԳԱՆՇԱՆ ՊԵՏԲ Ե ԸԼԼԱՅ ԲՈԼՈՐ ԱՆՈՆՅ, ՈՐՈՒՔ ԻՐԵՆՅ ՉԵՈՒՔԵՐԸ ԱՂՏՈՏԱԾ ԵՆ, ՈՐՈՒՔ ԱՅՍՕՐ ԿՈՒՁԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ»

ՀԱՍՏԱՏԵՑ ՀՅԳ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅՅՈՒՑԻՉ, ԵՐԵՄՓՈՒՄԸ ՅԱՎՈՐ ԲԱԳՐԱՏՈՒՆ

Լիբանանեան շարունակուող տագնապը լուրջ մարտահրաւերներու դէմ յանդիման դրած է մեր ժողովուրդը ընդհանրապէս եւ լիբանանահայ ազգային կառոյցներն ու հաստատութիւնները յատկապէս: Ստեղծուած տագնապին ի տես, «Տագնապը եւ մենք» յայտագիրներու շարքով «Վանայ ձայն» լուսարձակի տակ կ'առնէ ազգային մեր կառոյցներուն ունեցած դժուարութիւնները եւ հանրային քննարկումով կը ներկայացնէ անոնց դիմագրուած գլխաւոր միջոցները: Հինգշաբթի, 5 դեկտեմբեր 2019-ին, յայտագիրին հիւրն էր ՀՀԳ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, իսկ հարցազոյցը կատարեց Հուրի Փափագեան-Շմլիտեան: Ստորեւ՝ հարցազոյցին ամբողջութիւնը:



Շաբ.ը՝ էջ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐՈՒՆ ՀՈՒՅՅՈՒՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՁ

Կիրակի, 8 դեկտեմբեր 2019-ին, Անթիլիասի մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ մատուցուեցաւ Ս. եւ անմահ պատարագ: Պատարագի աւարտին, նախագահութեամբ Վրամ Ա. կաթողիկոսին, տեղի ունեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր արարողութիւն, 1988 թուականին Սպիտակի, Գիւմրիի եւ Վանաձորի մէջ տեղի ունեցած երկրաշարժի պատճառով զոհ զացած շուրջ 30.000 հայորդիներու հոգիներուն համար: Վեհափառ հայրապետը, հոգեւոր հայրերը եւ հաւատացեալները միասնաբար իրենց աղօթքը ուղղելով Աստուծոյ՝ խնորեցին, որ



ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԷԼԵԱՆ ՀԱՆԳԻՊԵՅԱԻ ՔԱՆԱՏԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՄԵԼԱՆԻ ԺՈԼԻԻ ՀԵՏ



7 դեկտեմբեր 2019-ին ՀՀԳ Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան հանդիպեցաւ Զեւատայի տնտեսական զարգացման նախարար Մելանի Ժոլիի հետ:

Շաբ.ը՝ էջ 3

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈւՋՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԿԻՍՍՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՅԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ



Պրաթիսլաւայի մէջ ԵԱԿԿ-ի նախարարական 26-րդ համաժողովի աշխատանքներուն մասնակցող արտաքին գործոց նախարար Չոհրապ Մնացականեան 6 դեկտեմբերին հանդիպում ունեցաւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի Երոպական եւ Եւրասիական հարցերով տեղակալ Ֆիլիպ Ռիկերի հետ:

Շաբ.ը՝ էջ 2

ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ՀՅԳ ԲԻՒՐՈՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ



Կազմակերպութեամբ ՀՀԳ Բիւրոյի երիտասարդական գրասենեակին, 5-7 դեկտեմբեր 2019-ին Երեւանի «Արամ Մանուկեան» կեդրոնին մէջ, ՀՀԳ երիտասարդական-ուսանողական 27 միւլթիւններու մասնակցութեամբ գումարուած եռօրեայ համահայկական խորհրդածրոյկը աւարտեց իր աշխատանքները:

ՀՀԳ ԲԻՒՐՈՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
Շաբ.ը՝ էջ 10

ՊՈԼՍՈՅ 85-ՐԳ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐՈՒ ԸՇԿՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԻՒՆՔՆԵՐ



Երեկ՝ կիրակի, 8 դեկտեմբերին, Պոլտոյ հայ համայնքը ընտրած է պատուիրակներ, որոնք 11 դեկտեմբերին պիտի ընտրեն Պոլտոյ 85-րդ պատրիարքը:

Շաբ.ը՝ էջ 3

ԺԸՊՐԱՆ ԹՈՒՆՅՆԻԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԳ. ՏԱՐԵԼԻՑԻ ՆՇՈՒՄ

Նախկին երեսփոխան Ժճպարան Թուրքիյի սպանությունները ԺԳ. տարելիցին առիթով, երկ Կեդրոնական ՊԵՂՐՈՒՔԻ Մար Ժառանգությունը եկեղեցուց



մէջ կատարուեցան հոգեհանգստեան արարողութիւն, որուն նախագահեց յոյն ուղղափառ համայնքի ՊԵՂՐՈՒՔԻ առաջնորդ Էլիաս Անտէ եպիսկոպոսը՝ ներկայութեամբ անոր ընտանիքին եւ մեծ թիւով պետական անձնակազմիներու եւ պաշտօնատարներու:

Անտէ եպիսկոպոսը իր խօսքին մէջ շեշտեց, որ այն, ինչ որ պատասխանատուները վախճուցած է եւ կը շարունակէ վախճուցիլ, իրաւունքն է եւ ճշմարտութիւնը: «Անտէ կը վախճան ցաւող եւ տված ժողովուրդին ձայնը, ինչպէս նաեւ իւրաքանչիւր հայրենասերի ձայնը», ըսաւ ան: Անտէ եպիսկոպոսը աւելցուց, որ Ժճպարանը սպանուողները ուզեցին լուռ պահել զայն, որպէսզի ան սիրտերուն եւ միտքերուն խաւարին մէջ լսեցած ճշմարտութիւնները չարթնցնէ, «եւ պատահական չէր, որ ան աքլորը որդեգրած էր իբրեւ խորհրդաւիշ», նշեց ան:

Անտէ եպիսկոպոսը ընդգծեց, որ իրաւունքն ու ճշմարտութիւնը վախճան չեն ունենար, այլ՝ աւելի հզօր կերպով կ'արձագանգէին:

«Այսօր Լիբանան կը ղեկավարուի մէկ անձի կողմէ, որուն լաւ կը ճանչնաք, եւ ոչինչ կ'ըսէ: Լիբանան կը ղեկավարուի այն բազմութեան կողմէ, որ զէնքով կը պաշտպանուի», ըսաւ ան՝ հարց տալով, որ արդեօք պատասխանատուները չեն լսել ժողովուրդին արդարացի պահանջները եւ անոնց խաղաղ ու քաղաքակիրթ ցոյցերը:

ՈՒՍԱ ԿԸ ՊՍԱՍՆԱՆԵ

Չառաարարութիւնը դիմադրութեան երեսփոխանական պլոքի նախագահ Մոհամետ Ռատա պատասխանելով Անտէ եպիսկոպոսին յայտնեց, որ ոմանք կը հաստատեն, որ երկիրը զէնքի ուժով եւ մէկ անձի կողմէ կը ղեկավարուի: «Այս անձին եւ անոր իմաստութեան նկատմամբ մեր բոլոր յարգանքով, եւ իմանալով հանդերձ, որ այդ անհատը իր գիտակցութեան շնորհիւ ինքն իրեն չ'արտօսեր երկրին առանձին իշխելու, որովհետեւ գիտէ, որ երկիրը այլ բարդողիչներ ունի, կը նշենք որ նման յայտարարութիւններ կատարող կողմեր կը փորձեն տագնապին իսկական պատճառները մոռցնել տալ եւ արդարացնել Լիբանանի մէջ Դիմադրութիւնը թիրախ դարձնելու փորձերը: Այս յայ-

տարարութիւնները անմեղ չեն եւ գաւազան արտասանողները անմեղ չեն», ըսաւ Ռատա:

Ան աւելցուց սակայն, որ հակառակ այդ յայտարարութիւններուն, իրենք կ'առջնաձեռն կը մնան Ազգային ուխտին, Թաեֆի համաձայնագիրին, Ազգային միասնականութեան կառավարութեան կազմութեան եւ սիւնի համայնքի ամենէն ականատր դէմքի վարչապետ նշանակումին:

ԹՈՒՆՅՆԻԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻՑՈՎ ԶՅԱՏԱՐՈՒՄԸ ԿԱՐԳ ՄԸ ԿԵՏՈՒՄԾԵԼԵՐ

Լիբանանեան ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր ժահճի հաստատեց, որ Ժճպարան Թուրքիյի յիշատակը մնայուն կերպով վառ կը մնայ իր մտքին մէջ, յատկապէս այս օրերուն:

Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ռաւիտ Ժումայրա ղոջուկեց Թուրքիյի յիշատակը՝ հաստատելով, որ ան կը մնայ ազատութեան սիրոյն գոհուած նահատակը:

Նախկին նախարար Աշրաֆ Ռիֆի հաստատեց, որ լիբանանցիները կը քալեն Ժճպարան Թուրքիյի երազին ուղիով: Ան աւելցուց, որ Լիբանան ազատագրուելու ընթացքին մէջ է:

Մարոնի ընդհանուր խորհուրդի նախագահ Ռատիի հագեցն հաստատեց, որ Ժճպարան Թուրքիյի կարողութիւնը ունեցած էր տարբեր հոսանքներու պատկանող լիբանանցիները իր շուրջ համախմբելու եւ բոլորին ըմբռնելու:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

- ԱՐՏԱԶԻՆ գործոց նախարարի պաշտօնակատար Ժճպարան Պասիլ յայտնեց, որ Լիբանան պիտի չկարենայ երկար գոյատեւել, եթէ պետք եղած բարեկարգումները կատարէ եւ երկիրը արտաքին միջամտութիւններ գերծ չպահէ:
- ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ նախարարի պաշտօնակատար Էլիաս Պու Սաապ յայտնեց, որ իր մէջ օրըստօր աւելի են կ'ամրապնդուի այն համոզումը, թէ Լիբանանի փրկութեան միակ լուծումը քաղաքացիական պետութեան կերտումն է:
- ՅԱՄԱՏԱՐՄՈՒԹԻՆ դիմադրութեան պլոքի երեսփոխան Չասան Ֆատալապ հաստատեց, որ իրենց համար ո'չ դիրքը եւ ո'չ ալ իշխանութիւնը կարելի է: «Ինչպէս որ ժողովուրդին անվտանգութիւնն ու արժանապատուութիւնը պաշտպանեցինք, պիտի պաշտպանենք նաեւ անոնց ապրուստը», ըսաւ ան:
- ԵՐԵՄՈՒՆԻՆ Նամաթ Աֆրամ յայտնեց, որ վարչապետի նշանակման պարտադիր խորհրդակցութիւններուն ընթացքին ինք պիտի առաջարկէ Նաուաֆ Սալամի անուը:
- ԵՐԵՄՈՒՆԻՆ Միշէ Աուուան հաստատեց, որ վարչապետի պաշտօնին համար ինք կը զօրակցի Նաուաֆ Սալամին եւ պիտի առաջարկէ անոր անուը:
- ԱԶԱՏԱԳՐՈՒՄ եւ բարգաւաճում պլոքի երեսփոխան Անուար Կալիլ հաստատեց, որ հանրապետութեան նախագահ զօր. Միշէ Աուն սահմանադրական հսկայական սխալ մը գործած է վարչապետ նշանակել առաջ կառավարութեան կազմութեան խորհրդակցութիւնները կատարելով:
- ԵՐԵՄՈՒՆԻՆ Ֆայսալ Զարամ հաստատեց, որ իր բնակարանին դիմաց բողոքի ցոյցեր չեն կատարուած, ինչպէս նաեւ կրակոցներ չեն արձանագրուած: Ան լրատամիջոցներէն պահանջեց իրենց հրապարակած լուրերուն մէջ զգուշ ըլլալ:
- ՄԱՐՈՆԻ համայնքի Պշարա Ռայի պատրիարքը մաղթեց, որ վարչապետի նշանակման երեսփոխանական պարտադիր խորհրդակցութիւնները յաջողին, եւ կարելի ըլլայ ամենէն մօտիկ ապագային նոր կառավարութիւնը կազմել:
- ՇԻԻՆԵՐՈՒ գերագոյն խորհուրդի նախագահ շէյխ Ապտէ Էմիր Զապալան կոչ ուղղեց լիբանանցի ղեկավարներուն՝ իմաստուն վարուելու եւ լիբանանցիները փրկելու ստորաբնութիւնը ճակատելու մէջ խելոգութիւն հաւանականութիւններ:
- ՅԵՂՊԱԼԼԱՅԻ ընդհանուր քարտուղարի տեղակալ շէյխ Նայիմ Զատմ շեշտեց, որ անկարելի է ընդունիլ, որ

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ... Ընդունակուած Ա. Էջն

Անդրադարձ կատարելով երկկողմանի համագործակցութեան ընդարձակ օրակարգին՝ Չորհրպայ Մազականեան եւ Ֆիլիպ Ռիկեր միտքեր փոխանակեցին իրար հետ՝ ընդգծելով ռազմավարական երկխոսութեան շրջագիծին մէջ ձեռք բերուած պայմանաւորութիւններու կատարման ընթացքին եւ ձեռնարկուելիք յառաջիկայ քայլերուն մասին:

Հայաստանի կառավարութեան կողմէ իրականացուող բարեփոխումներու ծիրին մէջ Հայաստանի արտաքին գործոց նախարարը բարձր գնահատեց ամերիկեան կողմի շարունակական աջակցութիւնը շարք մը ծրագրերու եւ նախաձեռնութիւններու: Ժողովականները միտքեր փոխանակեցին ԵԱԿԿ-ի նախարարական համաժողովի օրակարգային հարցերու շուրջ:

Զրուցակիցները անդրադարձան նաեւ միջազգային եւ շրջանային օրակարգի շարք մը հարցերու: Նախարար Չորհրպայ Մազականեան եւ Ֆիլիպ Ռիկեր կարծիքներ փոխանակեցին Միսսիսի խմբակի համահարգանքներու միջնորդութեամբ 4 դեկտեմբերին Հայաստանի եւ Ազգայնապետի արտաքին գործոց նախարարներուն միջեւ տեղի ունեցած հանդիպումին եւ անկէ ետք ԵԱԿԿ-ի Միսսիսի խմբակի համահարգանքի երկիրներու պատուիրակութիւններու ղեկավարներու յայտարարութեան շուրջ: Այդ ծիրին մէջ գրուցակիցները կարեւոր նկատեցին խաղաղութեան նպատակով միջավայրի ձեւաւորումը՝ զինադադարի դրութեան պահպանման եւ ամրապնդման, ինչպէս նաեւ ժողովուրդներու խաղաղութեան նախապատրաստման վերաբերեալ ձեռք բերուած պայմանաւորութիւններու իրականացման միջոցով:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԱՅՍՕՐՈՒՄՆԵՐ . . .

Ընդունակուած Ա. Էջն

Նշենք, որ վարչապետի նշանակման եւ կառավարութեան կազմութեան վերաբերող զարգացումներուն մասին նախագահ Աուն հեռաձայնային հաղորդակցութիւններ ունեցաւ խորհրդարանի նախագահ Լեալիի:

Պրորիի եւ հրաժարեալ վարչապետ Սաատ Հարիրիի հետ՝ ճշդելու համար այդ խորհրդակցութիւններուն ճակատագիրը:

Մինչ տարբեր լրատուամիջոցներ յայտնեցին, որ Հարիրիի նախագահ Աուն Են խնդրած է վարչապետի նշանակման խորհրդակցութիւնները յետաձգել հինգ շաբթի, 12 դեկտեմբերին:

ՍԱՍԻՐ ԿԱՐԳԻ ՅԵՏԱ ԿՈՉԵՑ ԻՐ ԹԵԿՆԱԿՆԵՐՈՒՄԸ

Վարչապետի թեկնածու Սամիր Կաթիպ երկ կէսօրէ ետք այցելեց Տար Ֆաթուա, ուր հանդիպում մը ունեցաւ հանրապետութեան միւլֆթի շէյխ Ապտէ Լաթիֆ Տըրիալի հետ:



Վարչապետի միւլֆթի շէյխ Ապտէ Լաթիֆ Տըրիալի հետ:

Հանդիպումէն ետք խաթիպ յայտնեց, որ միւլֆթի Տըրիալի ցուցումներն ու իմաստուն կեցուածքները իմացած է՝ Լիբանանի դիմագրաւած դժուար այս փուլին մասին:

«Հանդիպումին ընթացքին ընդգծուեցաւ ազգային եւ միջխաւարական միասնականութիւնը պահպանելու կարեւորութիւնը, որուն շրջագիծին մէջ հանրապետութեան միւլֆթին ընդգծեց օրէնքի եւ հաստատութիւններու պետութիւն մը կերտելու կարեւորութիւնը», ըսաւ ան:

Խաթիպ աւելցուց, որ հանրապետութեան միւլֆթին կը զօրակցի Սաատ Հարիրիի թեկնածութեան ու ամէն ջանք ի գործ կը դնէ Լիբանանի զարթօնը եւ արաբական աշխարհին մէջ ու միջազգային առումով անոր դերակատարութիւնը ամրապնդելու համար:

«Հանրապետութեան միւլֆթին իմացաւ նաեւ, թէ խորհրդակցութիւններու իբրեւ արդիւնք միջխաւարական համախորհուրդին գոյացած է Սաատ Հարիրիի վարչապետ նշանակելու, որպէսզի ան կազմէ իր նոր կառավարութիւնը: Հետեւաբար քիչ ետք պիտի այցելէմ Սաատ Հարիրիին», ընդգծեց խաթիպ:

Ան Տար Ֆաթուայէն ուղղուեցաւ Հարիրիի Կեդրոնական ՊԵՂՐՈՒՔԻ բնակարանը, ուր հանդիպում մը ունենալէ ետք



հրաժարեալ վարչապետին հետ ըսաւ. «Երբ վարչապետի պաշտօնին համար թեկնածութիւնն առաջարկուեցաւ՝ ընդառաջեցի բարեկամներուս, որոնք քաղաքական ղեկավարներ են: Այս առիթով կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել նախագահ Աունին, Պրորիիին եւ Հարիրիին, որոնք ինծի շնորհեցին իրենց վստահութիւնը: Այս առիթով բնական էր նաեւ, որ հեռաձայնային հաղորդակցութիւններ ունենայի քաղաքական տարբեր ղեկավարութիւններու հետ: Անոնց երկու շաբթեան ընթացքին կատարեցի այդ խորհրդակցութիւնները եւ ելքաբերուեցաւ նախաձեռնումը սուր արշաւներուն:

Նկատի ունենալով, որ Հարիրիի առաջարկած էր անունս եւ ինծի յայտնած իր զօրակցութիւնը, հանրապետութեան միւլֆթին հետ հանդիպումէս ետք ուղղեցայ Հարիրիի մօտ եւ անոր ներկայացուցի միւլֆթի Տըրիալի տեսակետը, որուն մասին Տար Ֆաթուայէն ես յայտարարած էի:

Հիմաւելով այս իրականութեան վրայ, խոզի կատարեալ հանգստութեամբ յետս կը կոչեմ թեկնածութիւնս՝ բարօրութիւն մարջեղով Լիբանանի եւ լիբանանցիներուն, ինչպէս նաեւ խոզի արթնութիւն

մարջեղով լիբանանցի քաղաքական ղեկավարութիւններուն, որպէսզի Լիբանանը կարենան փրկել»:

ԿԱՐԳ ՄԸ ԶԱՐԱՋԱԿԱՆ ՈՒՅԻՐ ԿԸ ՀԱՎԱԶՆԵՐ

Խաթիպի կատարած այս յայտարարութեան ետք, քաղաքական կարգ մը ուժեր հակադրեցին անոր որոշումին:

Ժողովրդավարական հանդիպում պլոքի նախագահ, երեսփոխան Թայմուր Ժումայրա յայտնեց, որ իր նախագահած պլոքը պիտի չմասնակցի խորհրդակցութիւններուն՝ մերժելով երկրին սահմանադրութեան գործադրութիւնը խախտելու իրականութիւնը:

Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Սամիր Ժամայէլ երեկոյեան ժամը 7:00-ին հրաւիրեց մամուլի ասուլիսի մը, որուն ընթացքին խստի դատապարտեց օրուան իշխանութիւնները: «Երկիրը տնտեսական ծանր վիճակի մէջ է, մարդիկ անօթի են, իսկ դուք կը խաղաք ու թակարդներ կը լարեք», ըսաւ ան:

Ան հաստատեց, որ իրենց պիտի մասնակցին խորհրդակցութիւններուն եւ պիտի առաջարկեն Նաուաֆ Սալամի թեկնածութիւնը:

Միւս կողմէ, խորհրդակցական հանդիպումը նիստ մը գումարեց երեսփոխան Ապտէ Ռահիմ Մըրատի բնակարանին մէջ՝ հաստատելով, որ կրօնական հեղինակութիւններուն կողմէ քաղաքական կեանքի գրաւումը վերջ մը կը դնէ սահմանադրական հաստատութիւններուն, յատկապէս՝ խորհրդարանի դերակատարութեան, գրաւելով նաեւ քաղաքական գործունեութեան ազատութիւնը:

Միւս կողմէ, խորհրդակցական հանդիպումը նիստ մը գումարեց երեսփոխան Ապտէ Ռահիմ Մըրատի բնակարանին մէջ՝ հաստատելով, որ կրօնական հեղինակութիւններուն կողմէ քաղաքական կեանքի գրաւումը վերջ մը կը դնէ սահմանադրական հաստատութիւններուն, յատկապէս՝ խորհրդարանի դերակատարութեան, գրաւելով նաեւ քաղաքական գործունեութեան ազատութիւնը:

ՅՈՅՅԵՐԸ ԿԸ ԸՆԴՈՒՆԱԿՈՒՄ. ԿՈՉ՝ Կ՛ՈՒՐԵՆ ԸՆԴՅԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՈՒՄ

Ժողովրդային շարժումին մաս կազմող ցուցարարները երկ երեկոյեան յայտարարեցին, որ այսօր ընդհանուր գործադուլ է, եւ ճամբաները պիտի փակուին՝ բողոքելու համար իշխանութիւններուն վարուելակերպին դէմ:

Անոնք ընդգծեցին, որ իրենց պահանջն է այսօր իսկ վարչապետի նշանակման խորհրդակցութիւններ կատարել եւ նշանակել ատակ ու պարկեշտ անձնակազմութիւն մը, որ կրնայ մասնագետներ բաղկացած կառավարութիւն մը կազմել եւ երկիրը իր ներկայ իրավիճակէն փրկել:

Ցուցարարները նշեցին, որ Թրիֆուլի մէջ ճամբաները պիտի սկսին փակուիլ առաւօտեան ժամը 4:00-էն սկսեալ, իսկ ժամը 8:00-էն սկսեալ պիտի փակուին Սեփիի հրապարակն ու Ռիկի կամուրջը, ինչպէս նաեւ ժայ Է Տիպը, Չուքը, Դագիւրը, Ժիպէյը, Տըբուէն, Հագմիւն, Կալտէն, Սայտան, Սուրը եւ Նամմէն:

Ուշ գիշերին փակուեցան Պեքայի, Աքքարի, Պրտտաուիլի եւ Պըհասի ճամբաները:

Ցուցարարները աւելցուցին, որ ճամբաները փակելու համար պիտի օգտագործեն գամեր:

Երկ երեկոյեան մեծ թիւով ցուցարարներ ողողեցին Նըժմէ հրապարակին մուտքերը եւ բազմիցս փորձեցին մուտք գործել հրապարակ:

Նահատակաց հրապարակն ու Ռիատ Սուլի իր կարգին վկայեց բազմամարդ ցոյցեր՝ հակառակ անսպասու կիմարին եւ տեղատարափ անձրեւներու: Անոնք քանի մը անգամ հրմտուցներ կատարեցին՝ Նըժմէ հրապարակի մուտք գործելու նպատակով:

Այս պատճառով ապահովութեան ուժերու աւելի մեծ թիւ մը հասաւ ՊԵՂՐՈՒՔԻ հակակշիռի տակ պահելու համար կացութիւնը:

Երկ գիշեր Թրիֆուլիի Նուր հրապարակին վրայ ցուցարարները լուսաւորեցին Կաղանդի տոնածառը՝ հաստատելով, որ անիկա լիբանանեան ազգային համալսարաններու եւ համերաշխութեան խորհրդակցութեան եւ համերաշխութեան խորհրդակցութեան խորհրդակցութեան վրայ գետնեցին նաեւ իրենց շարժումը խորհրդակցութեան ընթացքը:

Իսկ շաբթի օր խորհրդակցութեան ընթացքը գետնեցուցաւ նաեւ Անթիլիասի մայրուղիին վրայ:

Նշենք, որ շաբթի օր ցուցարարները հաւաքուեցան Ռիատ Սուլի հրապարակին վրայ, ուր ցուցարար մը փորձեց ինքզինքը հրկիզել, սակայն անոր շուրջիները արգիլեցին այդ մէկը եւ փրկեցին անոր կեանքը:

«ԱԶԳԱԿ»-Ի ՖՈՆԾԻՆ

- Լիբանանի ներկայ պայմաններուն մէջ քաջալերելով «Ազգակ»-ի աշխատանքը՝ Տեր եւ տիկին Վարդան Թաշճեան (Լիկոսիա) 200 եւրօ

ՄԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՈՒՐԳԻ ՅԱՆԱԶԻԿԱԿ ՆԻՍՏԸ ՊԻՏԻ ԳՈՒՄԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՆԹԻԼԻԱՏԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՉ



Շաբաթ, 7 դեկտեմբեր 2019-ին, լիբանանահայ երեք օրաթերթերու տնօրենները այցելեցին Արամ Ա. վեհափառ հայրապետին: Այցելութեան նպատակը շնորհակալութիւն յայտնել էր անոր՝ «Յայ մամլոյ տարուան» առիթով Լիբանանի ճգնաժամային պայմաններուն մէջ իր կատարած նիւթական աջակցութեան համար՝ լիբանանահայ երեք օրաթերթերուն:

Վեհափառ հայրապետը գնահատելով օրաթերթերուն տարած աշխատանքը՝ վերաշնչեց հայ մամուլին առաջելութիւնը շարունակելու անհրաժեշտութիւնը՝ հայապահպանման եւ հանրային կարծիքի ճիշդ հունակտրման դերակատարութիւնը ընդգծելով:

Այնուհետեւ խորհրդակցութիւնները կերտուեցան Անթիլիասի մարտականքին մէջ գումարած Յայ մամուլի Յամահայկական համաժողովէն բխած առաջադրանքները իրականացնելու կարելիութիւններուն վրայ: Տնօրենները զեկուցեցին տարբեր լրատուամիջոցներու հետ կայացած խորհրդակցական հանդիպումներուն մասին: Գոյացած է արդէն ընդհանուր համաձայնութիւն՝ համաժողովները հերթականութեամբ գումարելու անհրաժեշտութեան շուրջ:

Յամաժողովէն բխած համակարգող խորհուրդը իր յառաջիկայ նիստը պիտի գումարէ Անթիլիասի մէջ, 2020-ի փետրուարին: Խորհուրդին մէջ ներառուած էին Յայաստանի եւ Արցախի Յանրապետութիւններէն ու սփիւռքէն հետեւեալ մամլոյ պատասխանատուները.-

- Արամ Անանեան, «Արմենփրես» լրատու գործակալութեան տնօրէն
- Սարգիս Մելքոնեան, Յայաստանի լրագրողներու միութեան նախագահ
- Տիգրան Յարութիւնեան, Լրատուամիջոցներու համահայկական ընկերակցութեան նախագահ
- Շահան Գանտահարեան, «Ազգակ» օրաթերթի տնօրէն
- Սեւակ Յակոբեան, «Չարթթըք» օրաթերթի տնօրէն
- ԱՆԻ Եփրեմեան, «Արարտ» օրաթերթի տնօրէն
- Միքայէլ Յաճեան, Արցախի հանրային ռատիոյի աւագ վերլուծաբան

Վեհափառ հայրապետը ողջունելով մամլոյ համահայկական դաշտի ձեւաւորման միտող այս նախաձեռնութիւնները՝ շնչեղեց մամուլին դերակատարութիւնը հայկական հասարակական դաշտը բենաջոցներէ հեռու պահելու, ինչպէս նաեւ կառուցողական մտեցումներով համահայկական օրակարգը համախումբ ձեւելով ընտանիքի եւ հիմնահարցերու լուծման ուղիներ գտնելով միասին աշխատելու հրամայականը:

ՄԻՈՒԹԻՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՆՀԱՏՆԵՐՈՒ ՈՒՇԱՂՈՒԹԵԱՆ

Այն միութիւններն ու այն անհատները, որոնք կ'ուզեն դասախօսական ձեւաւորութիւններու եւ ընդունելութիւններու համար «Ազգակ»-ի «Փիւնիկ» սրահը օգտագործել, կրնան հեռաձայնել «Ազգակ»-ի խմբագրատուն, հեռ. 258526-260115-241274, երկուշաբթիէն ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 5:30-էն մինչեւ ժամը 7:30:

ՄԱՀԱՉԳ

Տիար Չոհրապ Սուլեան
Տէր եւ տիկին Յակոբ Սուլեան եւ դստերը
Տէր եւ տիկին Ներսէ Սուլեան եւ դստերը
Տէր եւ տիկին Արսէն եւ Նազիկ Փիլիպեան
Տէր եւ տիկին Յովիկ եւ Յուրի Զօպուեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վահան եւ Էլիզապէթ Բէշիշեան եւ դուստրը
Սուլեան եւ Անուրեան ընտանիքներ
Զօպուեան եւ Բէշիշեան ընտանիքներ
Պետրիկեան եւ Պուտաբեան ընտանիքներ
Յովհաննէսեան եւ Այնթապեան ընտանիքներ
Բէլլեշեան եւ Մարտիրոսեան ընտանիքներ
Մելքոնեան եւ Սարգիսեան ընտանիքներ
Եւ համայն ազգականներ կը գուծեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ՊԵՏՈՒՄ ՍՈՒԼԵԱՆԻ (ՃՆՆՆԱԿ՝ ԱՏՈՒՐԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ շաբաթ, 7 դեկտեմբեր 2019-ին:
Յուրաքանչեւութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ երկուշաբթի, 9 դեկտեմբերին, կէսօրէ ետք ժամը 1:00-ին, Լոր Մարաշի Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրծ Յամուտի Ազգային գերեզմանատունը:
•Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
•Յաւակցութիւնները կ'ընդունուին եկեղեցոյ «Յակոբ եւ Սօսի Չիլիսկիւրեան» սրահին մէջ յետ թաղման արարողութեան, մինչեւ երեկոյեան ժամը 7:00, իսկ երեքշաբթի, 10 դեկտեմբերին, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00, նոյն վայրին մէջ:

ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ



ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ընտրուած Կերտուեցան վարչութիւնը 2019-2023 թառամական իր առաջին լիազումար նիստերը կատարեց Փարիզի մէջ, 6-7 դեկտեմբեր 2019-ին:

Նիստերուն սկիզբը, Կերտուեցան վարչութիւնը Պատգամաւորական ընդհանուր ժողովը որոշումներուն լոյսին տակ ընկեց ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ եւ օրակարգի առանձին կէտերով արծարծեց միութեան սկաւորական, մարզական եւ երիտասարդական նորաստեղծ բաժանմունքին զարգացման միջոցները:

Կերտուեցան վարչութիւնը ընդհանուր արծարծումը կատարեց միութեան 111 մասնաճիւղերու իրավիճակին եւ հաստատեց, որ վերջին շրջանին ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ իր յառաջդիմութիւն արձանագրած է Յայաստանի կազմակերպական իր ցանցին ընդլայնումով, Արցախի եւ Թիֆլիսի մասնաճիւղերուն հիմնադրութեամբ եւ Մոսկուայի ու շրջակայ արուարձաններուն մէջ ծաւալած աշխատանքներուն աշխուժացումով:

Կազմակերպական օրակարգով, Կերտուեցան վարչութիւնը շնչեղեց երրորդային եւ նախկին հորհրդային միութեան նորակազմ հայ համայնքներուն մէջ ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ծաւալման հրատապ անհրաժեշտութիւնը՝ համախումբելու եւ փորելու համար տեղոյն երիտասարդութիւնը ձուլման անմիջական վտանգէ: Կերտուեցան վարչութիւնը որոշեց շարունակել Միացեալ Նահանգներու եւ Զանաւորական զինուորի քաղաքներու կողքին՝ հեռաւոր ու փոքրաթիւ համայնքներուն հասնելու իր ճիգերը՝ կազմակերպական ծամանակակից մտեցումներով եւ կառուցային համապատասխան պատշաճեցումներով: Միջին Արեւելքի պարագային, Կերտուեցան վարչութիւնը որոշեց թափ տալ շրջանային մարզախաղերու եւ միջվարչական աշխատանքներու կազմակերպման՝ մասնաճիւղերը աւելի յաճախ քով-քովի բերելու եւ համայնքներու կենսունակութեան նպաստելու համար:

Կերտուեցան վարչութիւնը վերականգնեց քոյր մասնաճիւղերու դրութիւնը՝ թելադրելով չբաւարարուիլ միայն Յայաստան-սփիւռք քոյր մասնաճիւղերու հոշակումով, այլ՝ անհրաժեշտութեան պարագային քոյր մասնաճիւղեր հոշակելով սփիւռքեան իրարմէ հեռու համայնքներու մէջ գործող իր մասնաճիւղերը:

Լիազումար նիստերու կարեւոր մէկ բաժինով, Կերտուեցան վարչութիւնը ընկեց միութեան դաստիարակչական ծրագիրներու, սկաւորական գիրքերու եւ մարզական կանոնադրութեան վերամշակման հրամայականը: Ծրուցեցան ընդհանուր ուղիքի մասին եւ պայմանաժամներ՝ վերատեսութեան ենթարկելու ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ մասնաճիւղերը՝ մասնաճիւղերը աւելի յաճախ քով-քովի բերելու եւ համայնքներու կենսունակութեան նպաստելու համար:

Կերտուեցան վարչութիւնը յատուկ ուշադրութեամբ ընկեց միութեան նորաստեղծ երիտասարդական բաժանմունքին ստեղծման քայլերը եւ հաստատեց, որ բաժանմունքը պիտի համախմբէ ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ-ի սկաւորներն ու մարզիկները, որոնք կը փափաքին միութեան կիսընկերակցութեամբ շարունակել այլապէս բնագաւառներու ճամբով: Կերտուեցան վարչութիւնը որոշեց մինչեւ մէկ տարի պատրաստել բաժանմունքին աշխատանքային ուղեցոյցը եւ փորձարկել զայն մինչեւ յաջորդ Պատգամաւորական ընդհանուր ժողով:

Կերտուեցան վարչութիւնը անորադարձաբար միութեան քարոզչական, տեղեկատվական եւ արհեստագիտական մարզերուն ընդհանուր իրավիճակին եւ անհրաժեշտ գտաւ ծամանակակից ու արդիական մտեցումներով հասնիլ երիտասարդական աւելի լայն շերտերու եւ հայկական կարելիութիւնները համայնքներէ հեռու մտացող աշխարհագրորդները հայտնելու: Ան այդ, ան անհրաժեշտ գտաւ «Մարզիկ» պաշտօնաթերթը տպագրիլ կողքին համացանցային տարբերակով ներկայացնել, ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ կայքէջի վրայ, կայքի եւ ընկերային ցանցերու աւելի արդիականացումը գործունէութեան ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ մէջ պատրաստել:

Քառամտայ իր ծրագիրներու յաջողութեան համար, Կերտուեցան վարչութիւնը սերտեց միութեան նիւթական կարելիութիւններուն ընդլայնման միջոցները՝ մտաւայել եւ հեռակայ ծրագիրներու մշակման ճամբով:

Լիազումարին ընտանիքային նիւթ դարձան նաեւ միութեան թանգարանին, արխիւներուն, համացանցային վաճառատան (online shop), եկամտաբեր ֆոնտին (Endowment fund) կապուած հարցեր:

Երկօրեայ իր նիստերուն ընթացքին, Կերտուեցան վարչութիւնը գնահատեց Լիբանանի ներկայ տագնապային պայմաններուն մէջ ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ-ի Լիբանանի շրջանային վարչութեան եւ մասնաճիւղերուն արտակարգ ճիգերը՝ միութեան կազմակերպման աշխատանքները անշեղ յանձնառութեամբ եւ կարելի աշխուժութեամբ շարունակելու՝ մատուցելով պատուէջի վրայ, յօգուտ համայնքին եւ ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ-ին:

Լիազումար իր նիստերու աւարտին, Կերտուեցան վարչութիւնը, ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ-ի Ֆրանսայի հայոց թեմի առաջնորդ Վահան եպս. Յովհաննէսեանի ներկայութեամբ, հանդիպում մը ունեցաւ Իսի լէ Մուլիոնի քաղաքապետ Անտոն Սանթիանի հետ՝ շնորհակալութիւն յայտնելու քաղաքին մէջ ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ-ի կառուցման իր բերած կարեւոր նպաստին համար: Մարզախաղերը պիտի ծառայէ երրորդային համայն հայութեան եւ պատրաստ պիտի ըլլայ մինչեւ 2022-ի աւարտ:

Վերջապէս, Կերտուեցան վարչութիւնը որոշեց 2019-2023 թառամական համար համա-ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ կատարել հետեւեալ ծամանակացոյցով. 2020-ին՝ միջդիւնական ժ. խորհրդաժողով եւ համա-ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ-ի համագումար, 2021-ին՝ համա-ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ-ի համա-ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ-ի համագումար եւ Պատգամաւորական ԺԳ. ընդհանուր ժողով:

ՅԱՄՈՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ԻՃՆԱՆ ՍԱԳԱԹԵՒԵԱՆ ՀԱՆԳԻՊԵՑԱԻ . . .

Շարունակուած Ա. Էջէն

Հանդիպման ընթացքին արծարծուեցան Զանաւոր-Յայաստան տնտեսական փոխգործակցման հեռանկարները եւ յատկապէս Յայաստանի մէջ խօսքի ազատութեան ըմբռնման ժողովրդավարական յստակ ուղեծիրի հայեցակէտը:
Հանդիպման մասնակից էին ՅՅԳ Բիւրոյի անդամ Րաֆֆի Տոնապետեան, ՅՅԳ Զանաւոր-Յայաստանի կոմիտէի ներկայացուցիչ Միտր Գարագաշեան, Զանաւոր-Յայաստանի միջնորդական ատենապետ Զարկ Տարազեան եւ Բեպտի Յայրապետի յանձնակառուի ներկայացուցիչ Արփի Պալիզեան:

ՊՈՒՆՈՑ 85-ՐԳ ՊԱՏԲԵՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ . . .

Շարունակուած Ա. Էջէն

Պոլսոյ հայկական եկեղեցիներուն մէջ, որոնք կը ծառայէին իբրեւ ընտրատեղամասեր, կատարուած է ձայներու հաշուարկ, հրապարակուած են նախական արդիւնքները:
Ըստ հրապարակուած տուեալներուն, ընտրուած է Արամ արք. Աթեշեանի սովորական հայկական եկեղեցոյ մէջ եւ շնորհակալութիւն յայտնած համայնքին:
Սահակ եպս. Մաշալեան երոյն ունեցած է Կե-տիկփաշայի հայկական եկեղեցոյ մէջ եւ շնորհակալութիւն յայտնած համայնքին:

ԱՌԱՋՆՈՐԳ ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԲԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԵՄՊԱՆԸ



Շաբաթ, 7 դեկտեմբեր 2019-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, Ազգային առաջնորդարանին մէջ, Լիբանանի հայոց առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոս հանդիպում մը ունեցաւ Լիբանանի մէջ Յայաստանի Յանրապետութեան ղեկավար Վահան Աթաբեկեանի հետ:

Հանդիպման ընթացքին ընտանուեցաւ Լիբանանի առկայ իրավիճակը եւ շնչուեցաւ հարցերը պետութիւն ու ժողովուրդ միասնաբար լուծելու հրամայականը: Նարեկ արքեպիսկոպոս յայտնեց, որ Ազգային առաջնորդարանը իր բոլոր կարելիութիւնները ի գործ դրած է նիւթապետ եւ բարոյապետ գորակցելու ընկերային-տնտեսական դժուարութիւններ դիմադրաւոր հայորդիներուն: Առաջնորդ սրբազանը յոյս յայտնեց, որ համայն հայութիւնը նեցուկ կը կանգնի լիբանանահայութեան եւ իր գորակցութեամբ կը նպաստէ, որ մեր պայմանները շուտով բարելաւուին:

Իր կարգին, ղեկավար Վահան Աթաբեկեան ըսաւ, որ Լիբանանը երկխօսութեամբ եւ գործակցութեամբ գոյութիւն ունեցող մարտահրաւերներուն արդար եւ ամբողջական լուծումներ պետք է գտնել, որպէսզի լիբանանահայութիւնը եւս շարունակէ իր աւանդական համահայկական դերակատարութիւնը: Այս առիթով Վահան Աթաբեկեան ըսաւ, որ հայրենի պետութիւնն ու ժողովուրդը եւս կը գորակցին լիբանանահայութեան:

«ԺԱՄԱՆԱԿԸ Ե ԶՈՐԳԱՆԱՆԻ . . . »

Շարունակուած Ա. Էջէն

Նթանիա հուլիս, որ այս հարցը արծարծուած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարին հետ Լիզպոսի մէջ չորեքշաբթի օր տեղի ունեցած հանդիպումին ընթացքին, սակայն մանրամասն ծրագիր մը չէ ներկայացուած:

«Ինչպէս Կոլանի բարձունքներուն վրայ մեր գերիշխանութեան ամբողջական ճանաչում մը ուզեցի, Յորդանանի հովիտին վրայ ալ մեր գերիշխանութեան ամբողջական ճանաչում մը կ'ուզեմ: Ժամանակն է Յորդանանի հովիտը առնելու իսրայէլեան գերիշխանութեան տակ», ըսաւ Իսրայէլի վարչապետը:
Նթանիա հուլիսի իսրայէլեան աշակողմեան «Մաքր Ռիշոն» օրաթերթին կազմակերպած խորհրդաժողովին ընթացքին իր արտասանած խօսքին մէջ անցուցաւ. «Ամերիկեան վարչակազմը ինձի բռնագրաւեալ Այրորդանանի վերաբերեալ ըսին, թէ բնակեցման վայրերուն մէջ «ոչ իսկ քար մը պիտի քանդուի»: Դեմ դրի ճնշումներուն, ոչ ոք արմատախիլ ըրիմք եւ բնակեցումներուն թիւը բարձրացուցինք»:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու նախագահ Տրամպը Ռաբի Ֆորիտայի մէջ Իսրայէլեան-ամերիկեան խորհուրդի ազգային խորհրդաժողովի ընթացքին իր արտասանած խօսքին մէջ յայտնեց. «Իսրայէլ երբեք Սպիտակ տան մէջ ինձմէ վա ընկեր չէ ունեցած, որովհետեւ ես, ի տարբերութիւն նախորդներուն, կը պահեն տուած խստումներս»:

Ան յիշեցուց, որ ինք կենցիկ կոչած է հրեաներու համար այնպիսի կարեւոր խոստումներ, որոնք եւս երուսաղէմը իբրեւ Իսրայէլի մայրաքաղաք ճանչնալու, Միացեալ Նահանգներու ղեկավարութեան այլեւս տեղափոխման ու Կոլանի բարձունքներուն վրայ Իսրայէլի գերիշխանութեան ճանաչումը:

«Միացեալ Նահանգներու մէջ կան որոշ հրեաներ, որոնք բաւականաչափ չեն սիրեր Իսրայէլը», ուստի՝ իրենք պետք է այնպէս ընեն, որ այդ մարդիկ սիրեն Իսրայէլը:

ՄԱՀԱՉԳ

Տիկին Սիլվա Գրաճեան եւ զաւակները՝ Կասիա եւ Սարին
Տէր եւ տիկին Վարդգէս եւ Սոնիա Գրաճեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Ներսէս եւ Սոնա Ֆըստըճեան եւ զաւակունք
Տիար Գրիգոր Գրաճեան եւ զաւակունք
Գրաճեան եւ Պատուաւորական ընտանիքներ
Տեքլիմեան եւ Եօլմէսեան ընտանիքներ
Եւ համայն ազգականներ կը գուծեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր եւ հարազատին՝

ՎԱՀԱԳՆ ԳՐԱՃԵԱՆԻ (ՃՆՆՆԱԿ՝ ՊԵՏՐՈՒՆ, 1942-ԻՆ)

մահը, որ պատահեցաւ շաբաթ, 7 դեկտեմբեր 2019-ին, երեկոյեան ժամը 6:00-ին:
Յուրաքանչեւութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ երկուշաբթի, 9 դեկտեմբեր 2019-ին, կէսօրուան ժամը 12:00-ին, Լորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրծ Յամուտի Ազգային գերեզմանատունը:
•Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
•Յաւակցութիւնները կ'ընդունուին յետ թաղման արարողութեան, մինչեւ երեկոյեան ժամը 7:00, Ազգային առաջնորդարանի «Երջո Սամուէլեան-Շառլոյն» սրահին մէջ եւ կը շարունակուին երեքշաբթի, 10 դեկտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00, նոյն վայրին մէջ:

•ԾԱՍՕԹ.- Փոխան ծաղկապսակի՝ նուիրատուութիւնները կատարել «ԸՍՅ»-ի (Յայ ծերերու տան) ղեկավարին:

«ԱՅՍՕՐ ԺՈՂՈՎՐԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԶԳՈՒՇՄԱՐՆ ԱԶԳԱՆՇԱՆ ՊԵՏՔ Ե ԸԼԼԱՅ ԲՈԼՈՐ ԱՆՈՒՑ, ՈՐՈՒՔ ԻՐԵՆՑ ԶԵՌՔԵՐԸ ԱՂՏՈՏԱԾ ԵՆ, ՈՐՈՒՔ ԱՅՍՕՐ ԿՈՒՁԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ»

Շարունակում Ա. Էջեն

«ՎԱՆԱՅ ԶԱՅԼ».- Լիբանանեան տաճարային արդէն ինքզինք պարտադրած է. այսօր ինչպէ՛ս կը ներկայացնէ իբրևանեան տաճարային գարգացումները եւ ելեւէջները: Կառավարութեան հրաժարականէն 38 օր ետք ո՛ր կը գտնուի՞նք, եւ կը կարծէ՛ք, թէ յառաջիկայ շաբաթ Լիբանան տուր վարչապետ կ'ունենայ:

ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ.- Նախ ըսեմ, որ այս ժողովրդային շարժումը ընթացք առաւ, եւ ցատումը ցուցարարներու միջոցով արտայայտուեցաւ հոկտեմբեր 17-ի գիշեր, հռչակաւոր ուսաբասփին վրայ հարկ ճշդելու որոշումի լոսին տակ: Յաջորդ օրը ունեցած իմ հարցազրոյցի ընթացքին շատ յստակօրէն ըսի, որ եղածը փտածութեան եւ շահագործումի դէմ արդար պոռթկում է, դանակը հասած է ոսկորին. խրամատը, որ օրէ օր կը լայննար եւ կը խորանար՝ աղքատ, բանուոր եւ մեծահարուստ դասակարգերուն միջեւ, բնականաբար, պիտի տաներ ժողովրդային ցատումի:

Յաջորդող բանի մը օրերուն, երբ տարբեր առիթներով մեր ժողովուրդի գաւակներուն հետ կը խօսէինք կայացած հանդիպումներուն, ակումբներ տրուած այցելութիւններուն ընթացքին կամ մամուլով, միշտ այլ կը հաստատուէին, որ ժողովուրդին բարկութիւնը արդար է, եւ անհրաժեշտ է այս խնդիրներուն արագ ու շուտափոյթ լուծում տալ: Օրին նաեւ քաղաքական մեր յարաբերութիւններու ճամբով մենք շօշափած էինք այն տրամադրութիւնը, որ եթէ երբեք կառավարութիւնը հրաժարի, վատէն աւելի վատ վիճակի պիտի երթանք եւ զգուշացուցած էինք նաեւ վարչապետին հետ մեր խօսակցութեան ընթացքին, ինքն այլ նոյն տրամադրութեան մէջ էր, որ կարելի չէ լքել նաւը հիմա եւ կառավարութեան հրաժարական յայտարարել, որովհետեւ այդպիսով շատ

Ներկայիս այս շարժումը վերածուած է ամեն մարդու դժգոհութեան՝ ամեն մարդու եւ ամեն բանի դէմ: Առաջին օրերու ներկայացուած ընկերային, տնտեսական, արդարութեան եւ կեցողային պահանջներուն զուգահեռ, շատ արագ տեղ գտան քաղաքական պահանջներ:

աւելի վատ պիտի ըլլան տնտեսական, կենցաղային պայմանները, ինչպէս նաեւ դրամատնային մարզը: Բայց, դժբախտաբար, վարչապետին հրաժարականով կառավարութիւնը հրաժարուցաւ:

Անցնող 48 օրերուն ընթացքին, դժբախտաբար, ժողովրդային այս շարժումին մէջ շատ բան փոխուեցաւ: Ես հետեւեալ ձեռով բնութագրեմ այսօր հրապարակներու եւ փողոցներուն մէջ տեղի ունեցածը: Ներկայիս այս շարժումը վերածուած է ամեն մարդու դժգոհութեան՝ ամեն մարդու եւ ամեն բանի դէմ: Առաջին օրերու ներկայացուած ընկերային, տնտեսական, արդարութեան եւ կենցաղային պահանջներուն զուգահեռ, շատ արագ տեղ գտան քաղաքական պահանջներ: Այն խօսքը, որ այս շարժումը պետք է քաղաքականանայ, բնականաբար անհեթեթութիւն է, որովհետեւ նման շարժում քաղաքական էր արդէն: Սակայն պետք չէ քաղաքականանայ այն իմաստով, որ պետք չէ վերածուի միջամայնթային կամ քաղաքական կողմերու միջեւ տաղանայի, այլ մայր ընկերային, տնտեսական, կենցաղային պահանջներու սահմաններուն մէջ:

Իրողութիւն է, որ Լիբանանի կառուցուածքը այնպիսին է, որ վիճակը սկսածին պէս չէր կրնար մնալ, փաստօրէն այսօր ակաստես ենք ընկերային, տնտեսական, կենցաղային տաճարակներ շատ աւելի լուրջ ու ծանր քաղաքական տագնապի մը, որ մեզ դրաւ 38 օրէ ի վեր հրաժարած կառավարութեան ողջ դիմաց, որ սահմանադրականօրէն տակաւին իրաւասութիւններ ունի աւելի փոքր տարողութեամբ իր աշխատանքները կատարելու, երկրորդ՝ տեսանք ժողովրդային ցատումի յաւելում, իսկ ամենէն վտանգաւորը, տեսանք, այն, որմէ միշտ խուսափիլ ուզած էինք, անկէ զգուշացուցած էինք եւ կը շարունակենք զգուշացնել՝ վերադառնալու 1975-ին: Ինչ եւ մտցեալ շաբաթ պատահեցաւ՝ մեզի վերջիչեցնելով պատերազմի օրերը, պատերազմի օրերու թաղամասերը, փողոցները, սահմանագծումները, անցարգելները, դրական մթնոլորտ չէին ստեղծուի մեզ կը դնէին այն կացութեան դիմաց, որ արդէն անցնող 40-45 տարիներու իսրայէլ գոյակցութեան, հաշտեցումներու, համաձայնութիւններու, փոխադարձ զիջումներու մթնոլորտը, ըստ ելութեան այն չէրի՛ն, ինչ որ կ'ենթադրէինք կամ շինծու ու կե՛րօծ էին, եւ մարդիկ այսօր արդէն

Արթնութիւնը կարեւոր է, այո՛ւ՝ ցուցարարներուն մէջ արթուն տարրերը շատ են, պետք է վստահիլք անոնց բայց նաեւ պետք է մոլորիլք այն վիճակով, որ ամեն ինչ քանդուած է, այո՛ւ, քանդումի ճամբու վրայ ենք, եթէ չկարենանք մենք մեզի վերադառնալ, մտածել, որ պետք է կանգ առնենք, պետք է սկսիլք նորին, որովհետեւ վերջապետութեան վնասողը կ'ըլլայ աղքատ եւ միջին դասակարգի պատկանողը:

կը վերադառնան իրենց բնագոյնին վիճակի՛ն: Այսօր հրապարակ նետուեցաւ մասնագետներու եւ քաղաքական կառավարութեան կազմութեան հարցը: Հրապարակ նետուեցաւ ինչ կազմէն ոչ ոք իբրեւ նախարար սկստի ունենալով, քաղաքական կողմերը հեռացնելու խնդիրը, միջազգային զանազան շրջանակներէ՛ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարէն սկսեալ, դրսեւորուեցան կեցուածքներ, որոնք, կ'ուզեն հաւատանք, որ իբրևանացիին վրայ պետք չէ ազդել: Բայց եւ այնպէս գիտենք, որ Լիբանանը միշտ եղած է այն միջավայրը, ուր արտաքին ուժեր միջամտած են, իբրևանեան ուժեր դիմած են արտաքին ուժերու, բայց առեւն է, որ մենք գիտակցինք, որ այս կացութեան հիմնական ու գլխաւոր պատասխանատուն մենք ենք՝ իբրեւ իբրևանցիներ, հետեւաբար մենք պարտաւոր ենք փոխզիջումներով լուծուներ գտնելու, թէկուզ կառավարութեան կազմութեան ետք:

Հիմա չեմ ուզեր ամբոխահաճոյ ըլլալ եւ դրական բաներ ըսել, ոչ այլ ունենան շատ ժխտական կեցուածքներ, որոնք անպայմանօրէն իրականութեան չեն համապատասխաներ: Գիտենք, որ իբրևանացիին առանձինը որոշում չի կրնար տալ, գիտենք նաեւ, որ տասնամեակներէ ի վեր իբրևանեան քաղաքական ամբողջ ընթացքը ենթակայ եղած է արտաքին միջամտութիւններու,

բայց, ըստ ելութեան, այսօր այդ արտաքին միջամտութիւնները եկան խաչմերուկի վրայ ըլլալու փտած պետութեան եւ կարգ մը քաղաքական դէկադարներու, փտած դրամատնային եւ դրամատիրական շրջանակներու յփացած կացութեան հետ, որուն իբրեւ հետեւանք ալ ժողովուրդը հասաւ այս վիճակին:

Այսօր հրապարակ իջած մարդիկ կը մերժեն նոր վարչապետի թեկնածուի անունը, որ կու գայ դարձեալ շինարարական, երկ-

Տեսանք ժողովրդային ցատումի յաւելում, իսկ ամենէն վտանգաւորը, տեսանք, այն, որմէ միշտ խուսափիլ ուզած էինք, անկէ զգուշացուցած էինք եւ կը շարունակենք զգուշացնել՝ վերադառնալու 1975-ին:

րաչափական շրջանակներէն: Այս գծով խորհրդակցութիւնները մնացին երկուշաբթի օրուան, որովհետեւ կան կարգ մը խոչընդոտներ կամ կարգ մը երաշխատութիւններու կարիք կայ տակաւին, ինչ որ ժամանակի կը կարօտի: Ամեն պարագայի, եթէ երկուշաբթի բաղձալի անունը ճշդօրէ, կ'ենթադրեմ, որ տակաւին ժամանակ պիտի ունենանք կառավարութեան կազմութեան, որովհետեւ այդքան ալ դիւրին չէ այդ կազմութիւնը. կարելի է ընդհանուր խորագիրներու շուրջ համաձայնիլ, բայց երբ կու գանք մանրամասնութիւններու, բնականաբար յաւելեալ դժուարութիւններու կը հանդիպինք:

Այս բոլորը չեմ բեր վախճնելու համար ժողովուրդը, բայց յուսալու տարողութեան մէջ պետք է զգուշարու ու իրապաշտ ըլլալք, որովհետեւ երբ յոյսին չափը, աստիճանը կը բարձրացնենք, յուսախաբութիւնը շատ աւելի ծանր կ'ըլլայ: Ամեն պարագայի, մենք կը հետեւինք կացութեան, բնականաբար կը փորձենք ընել առաւելագոյնը, որ կարենանք առաջին հերթին համալիբանեան տագնապին լուծման մէջ մեր կարողութեան սահմաններով ներդրումը կատարել, իսկ երկրորդը՝ ըլլալու կողքին մեր ժողովուրդին, մեր համայնքին, մեր շրջապատին, որոնք բոլոր լիբանացիներուն նման ազդուած են երկրի այս ապակաւում մթնոլորտէն, փտածութեան, իւրացումներու երեւոյթն. թերեւս ամենէն աւելի վնասողը համայնքը մենք եղած ենք, որովհետեւ մեր անանդութիւններուն մէջ այդ տեսակի բաներ, բարեբախտաբար, գոյութիւն չեն ունեցած:

«Վ. Ձ.».- Քաղաքական այս տագնապի կողքին աւելի սուր տագնապ մը գոյութիւն ունի՝ տնտեսական-ընկերային: Ինչպէ՛ս եւ ինչո՞ւ ծնաւ այս տագնապը, ինչպէ՛ս հասանք հոս:

Յ. Բ.- Մենք տարիներէ ի վեր այս կացութեան մէջ էինք, տնտեսական տագնապը նաեւ չէր, ոչ ալ փտածութիւնը, անցնող կառավարութեան օրերուն չէր, որ պատահեցաւ ամեն ինչ, իւրացում-

Լիբանանը միշտ եղած է այն միջավայրը, ուր արտաքին ուժեր միջամտած են, իբրևանեան ուժեր դիմած են արտաքին ուժերու, բայց առեւն է, որ մենք գիտակցինք, որ այս կացութեան հիմնական ու գլխաւոր պատասխանատուն մենք ենք՝ իբրեւ իբրևանցիներով լուծումներ գտնելու, թէկուզ կառավարութեան կազմութեան ետք:

ներն ալ նոր չէին, եւ երբ նոր չէ կ'ըսեմ, նոյնիսկ չեմ ըսեր, որ վերջին 30 տարիներուն յատուկ են ասոնք, պարզապէս ներկայիս գումարները մեծացած են: Լաւ կը յիշեմ, 2000-ի երեսփոխանական ընտրութիւններուն, երբ կ'ըսէինք, որ 30-40 միլիարդ տոլարի պարտք ունինք եւ այսպէս եթէ շարունակենք պիտի մեծնայ գումարը, այն առեւն մարդիկ չէին ըմբռնէր՝ ի՛նչ կ'ըսէին, նոյնը կրկնեցինք 2009-ի ընտրութիւններուն, եւ ամեն անգամ, որ քաղաքական տագնապի մէջ ըլլայինք, այս հարցերը կը դրուէին:

Այո՛, այսօր երկիրը տնտեսական շատ մեծ տագնապի դէմ յանդիման է, բայց առիթաւ ծնունդ է այսօրուան: Այսօր արագաճա տագնապի՝ երկու հիմնական պատճառներով. նախ այն, որ նախորդ խորհրդարանը յաւելումներ ճշդեց՝ թէն արդար, սակայն պարտքը բարձրացնող: Մենք, իբրեւ Հայկական երեսփոխանական պլոք, համաձայն էինք պաշտօնեաներու, ուսուցիչներու ամսականներու յաւելման, որ տարիներու արդար պահանջք էր, միաժամանակ այդ օրերուն ճշդուեցաւ, իսկ այդ գումարներու հայթայթումը պիտի ըլլար պետութեան այդ ծակ տակառը նեղընելով, աւելորդ ծախսերէ հեռու մնալով՝ եւ փտածութեան դէմ պայքարով: Յաջողեցանք ամսականներու յաւելման օրինագիծը անցընել, բայց պետութիւնը ձախողեցաւ միւսը ընել, ո՛չ միայն ձախողեցաւ, այլ նաեւ շարունակեց իր ընթացքը: Շատ լաւ կը յիշեմ, երբ սեպտեմբեր 2-ին Պապատային մէջ տնտեսական երկխօսութեան ժողով մը գումարուեցաւ՝ հանրապետութեան նախագահին հրաւերով եւ նախագահութեամբ, ինչ մեր պլոքին անունով ըսի, ուրիշներ ալ ըսին, որ ժողովուրդին կարելի չէ այլ տես տես խօսիլ, այլեւ կարելի չէ օրօրէ ժողովուրդը, անկեղծ եղէր եւ ըսէք, թէ ո՛ր կ'երթանք: Այդ օրերուն կազմուեցաւ յատուկ մասնագիտական խմբակ, որ դժբախտաբար վարչապետ Հարիրիի նախագահութեամբ չկոչուեց, արագ որոշումներ կայացնել:

Պարզ է, որ որեւէ տան մէջ, երբ քու կարողութիւններդ տասը անգամ աւելի դրամատնային տոկոսներով պարտքեր կ'առնես , վերջապետութեան տուող ու ամեն ունեցածդ կը ծախես եւ կ'ունենաս հոգեկան տագնապներ: Դժբախտաբար այսօր ինչ ենք, սակայն քանդումի մէջ չենք, այսօր առեւն է, որ մենք կարենանք մեր գօտիները սեղմել իբրեւ պետութիւն եւ առաւելագոյն ճիգով ձգտիլ, որ այս գառնիթափի վրայ կանգ առնենք առանց աւելի գործելու, այլ կարենանք կամաց-կամաց մեր մէջքը ուղղել: Տրամաբանութիւնը այն կ'ըսէ: Երբ կը սկսինք բարձրացնել արդար դժգոհութիւններուն ալիքը անհամեմատօրէն, նոյն առեւն կը վտանգեցնէ եւ կը հարուածենք անվտանգութիւնը, հետեւաբար երկրի քաղաքական եւ ապահովական անվտանգութեան աւելի, կը վտանգուի ժողովուրդին տնտեսական, կենցաղային, ընկերային կենանքը, ինչ որ հարուած է երկրի քաղաքական անվտանգութեան եւ ամբողջ երկրի ապահովութեան: Փաստօրէն այսօր փողոցը, փողոցները դարձած են, ոչ թէ իրարու հակադիր, այլ նոյն փողոցին մէջ տարբեր հարցերու մասին 180 աստիճան տարբեր կեցուածքներով եւ կարծիքներով:

Վերջին հաշուով սահմանադրութիւն մը կայ երկրին մէջ եւ, փորձառութիւնը մեզի ցոյց տուած է, 1920-էն ստիկն, Մեծ Լիբանանի յայտարարութենէն առիկն, թէ ամէն անգամ որ մենք սահմանադրական կառուցներ դուրս որոշումներ կամ ձգտումներ ունեցած ենք, երկիրը գացած է պատերազմի: Այսօր կարելի չէ շրջանցնել սահմանադրական կառուցները, այնքան առեւն որ այս սահմանադրութեամբ այս կառուցները գոյութիւն ունին, այս կառուցներուն ճամբով կարելի է սրբազրել, մնացեալը սահմանադրութեան փոփոխութեամբ կ'ըլլայ, խորհրդարանական ընտրութիւններով կ'ըլլայ, սահմանադրական կարգերը յարգելով կ'ըլլայ, փողոցը կը ճնշէ, բայց փողոցը չի կրնար ապահովական խախտումի պատճառ դառնալ: Այսօր հաւաքական պատասխանատուութիւն մը կայ քիչ մը հանդարտելու, ամեն ինչ գոռում գոչումով չ'ըլլար: Ամեն ինչ հայիոյանքով չ'ըլլար, ինչքան ալ տկար, բայց դեռ կայ պետութիւն, սահմանադրական կառուցներ կան, ինչքան ալ չհաւնինք զանոնք եւ բարեփոխումներ ուզենք, առանց գիտնալու, որ անոնք օգտակար են կամ ոչ: Ժողովուրդին մէկ մասը այն կարծիքին է, որ պետք է ջնջել քաղաքական համայնքայնութեան իրավիճակը, իսկ ուրիշներ մտահոգ են: Կարգ մը շրջանակներ քաղաքացիական պետութեան հաստատում կ'ուզեն, մինչ տակաւին քաղաքական պասկի արտօնութիւն չկայ Լիբանանի մէջ: Կ'ուզեմ ըսել, որ հաւաքական պատասխանատու-

Մենք առաջին օրէն ըսինք, որ մեզի համար շատ բնական է, որ մեր երիտասարդութիւնը, ուսանողութիւնը, ժողովուրդը մասնակցի այս ցոյցերուն, որովհետեւ վերջին հաշուով ասոնք նաեւ մեր պահանջներն են, եւ պետութեան բացակայութեան մենք անհրաժեշտը ըրած ենք, որ մեր ժողովուրդին ցուեղը գէթ որոշ չափով մեղմացնենք, բայց նաեւ պատասխանատուութիւն ունինք մասնակցելու երկրի վերաշինութեան ընթացքին:

թեան մէջ կը մտնէ իւրաքանչիւր քաղաքացիի անձնական պատասխանատուութեան խնդիրը. վիրաւոր է քաղաքացին եւ տնտեսապէս վատ վիճակի մէջ է, այո՛ւ: Այս ալ ըսեմ, որ բոլոր փողոց իջնողները աղքատ չեն, փտածութենէն վնասողներ չեն, կան շատեր, որոնք փտածութեան մէջ դերակատար են եւ իրենց առօրեան այդ փտածութեամբ կառուցած են, բայց այսօր նաեւ կ'ուզեն մաս կազմել տեղի ունեցածին՝ յառաջիկայ պետութեան մէջ դերակատարութիւն ունենալու համար: Այս բոլորը պետք է ըսենք առանց արժեզրկելու ժողովուրդային ցատումին, պոռթկումին, ապստամբութեան արդար պահանջները:

Կրնանք այսօր քանդել, բայց փորձը ցոյց տուած է, որ Լիբանանի մէջ դժուար է վերակառուցել: Հոս նաեւ պետք է անդադրուած անհատական պատասխանատուութեամբ մարդոց տարածած կեղծ լուրերուն, որոնք մասին մեզմէ առաջ հեռատեսիլի կայանները սկսած են խօսիլ: Այն կայանները, կայքերն ու մասնագետները, որոնք յաճախ կեղծ լուրերու արտադրիչներն ու հեղինակներն են, հիմա գանգատիլ սկսած են: Այնքան վատ քիսախնդրութիւն կայ երկրին մէջ, որ ինչ տարի առաջուան տեսերիկ մը պատճառ կրնայ դառնալ բանի մը հոգիի մահուան, պատճառ կրնայ դառնալ քաղաքացիական պատերազմի, արթնութիւնը անհրաժեշտ է քաղաքացիներուն համար: Հոս է մեր վայն ու մտահոգութիւնը, երբ կը խօսինք օտարամուտ մարդոց գոյութեան, անհատներու մասին, որոնք ցոյցի մէկ հրապարակներէն միւսը կ'անցնին, ամէն օր տեսակ մը որօշ կը բարձրացնեն եւ այլն: Այս բոլորին մէջ արթնութիւնը կարեւոր է, այո՛ւ՝ ցուցարարներուն մէջ արթուն տարրերը շատ են, պետք է վստահիլք անոնց բայց նաեւ պետք է մոլորիլք այն վիճակով, որ ամեն ինչ քանդուած է, այո՛ւ, քանդումի ճամբու վրայ ենք, եթէ չկարենանք մենք մեզի վերադառնալ, մտածել, որ պետք է կանգ առնենք, պետք է սկսիլք նորին, որովհետեւ վերջապետութեան վնասողը կ'ըլլայ աղքատ եւ միջին դասակարգի պատկանողը:

Այսօր ժողովրդային շարժումը զգուշացման ազդանշան պետք է ըլլայ բոլոր անոնց, որոնք իրենց ձեռքերը աղտոտած են, զգուշացման նշան պետք է ըլլայ բոլոր անոնց, որոնք այսօր կ'ուզեն քաղաքական դերակատարութիւն ունենալ, որ անցեալը փակուցանուցանեն: Շարժումը ինքզինք պետք է կազմակերպէ, կարելի չէ երկիրը ձգել անիշխանական իրավիճակի մէջ: Յեղափոխութեան եւ անիշխանութեան միջեւ մազի բարակութեան չափ տարբերութիւն մը կայ, շատ դիւրին է ապստամբութիւնը, պոռթկումը վերածել անիշխանութեան, իսկ անիշխանութիւնը կը քան-

Բոլոր փողոց իջնողները աղքատ չեն, փտածութենէն վնասողներ չեն, կան շատեր, որոնք փտածութեան մէջ դերակատար են եւ իրենց առօրեան այդ փտածութեամբ կառուցած են, բայց այսօր նաեւ կ'ուզեն մաս կազմել տեղի ունեցածին՝ յառաջիկայ պետութեան մէջ դերակատարութիւն ունենալու համար: Այս բոլորը պետք է ըսենք առանց արժեզրկելու ժողովրդային ցատումին, պոռթկումին, ապստամբութեան արդար պահանջները:

դէ այս երկիրը: Հետեւաբար, այս իմաստով մենք զգուշ պետք է ըլլանք, բարեբախտաբար մեծ է տոկոսը այն քաղաքացիներուն, որոնք այսպէս կը մտածեն: Մենք առաջին օրէն ըսինք, որ մեզի համար շատ բնական է, որ մեր երիտասարդութիւնը, ուսանողութիւնը, ժողովուրդը մասնակցի այս ցոյցերուն, որովհետեւ վերջին հաշուով ասոնք նաեւ մեր պահանջներն են, եւ պետութեան բացակայութեան մենք անհրաժեշտը ըրած ենք, որ մեր ժողովուրդին ցուեղը գէթ որոշ չափով մեղմացնենք, բայց նաեւ պատասխանատուութիւն ունինք մասնակցելու երկրի վերաշինութեան ընթացքին:

Արտագրեց՝ ՍԻԼՎԻ ԱԲԵԼԵՆՍ

(Շար. 1)

պէ լուրեթամբ յարգեցին սուրբ Լահատակների յիշատակը:

Գիտաժողովի առաջին օրը նշանակուեց Յայոց ցեղասպանության թանգարանի ժամանակավոր ցուցադրութիւնների սրահում «Յայերի փրկութեան գործը Մեր-ճաւոր Արեւելեացի 1915-1923 թուականներին. ազգային միասնութեան ղեկի վերածնունդ» խորագրով ժամանակավոր ցուցադրութեան բացումը:

Նոյեմբերի 9-ին գիտաժողովի աշխատանքները շարունակուեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա.» կրթական կենտրոնում: Գիտաժողովի ժամանակակիցներին ու հիւրերին ողջունեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների ու արխիւի տնօրէն հայր Ասողիկ Կարապետեանը:

Գիտաժողովի երկրորդ օրն ունեցաւ երեք կիստ, առաջին կիստը նախագահեց Յարութիւն Մարութեանը: Կիստը նուիրուած էր հայերի փրկութեան հարցում հոգեւոր կառույցների դերին: Չեկոյցներ կարողացին՝ 33 Ազգային արխիւի գիտահետազոտական բաժնի վարիչ, Գոհար Ազգեանը՝ Սուրբ Էջմիածնի Եղբայրական օգնութեան յանձնաժողովի գործունէութիւնը, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբան Շահան արք. Սարգիսեանը՝ «Որբանոցից կաթողիկոսարան. Կիլիկիոյ կաթողիկոսութեան հաստատումն Անթիլիասում», ՅՅԹ Յուշագրութիւնների, վաւերագրերի եւ մամուլի ուսումնասիրութեան բաժնի վարիչ, աւագ գիտաշխատող Միհրան Միհասեանը՝ «Յալէպի Ազգային առաջնորդարանի գործունէութիւնը Յայոց ցեղասպանութեան տարիներին, ԵՊՀ հետազոտող, Գիմար Զայգերը՝ «Բողոքականների նպատամատոյց գործունէութիւնը օսմանեան 4-րդ բանակի շրջանում - 1915-1917 թթ.», եւ ՅՅԹ Յայոց ցեղասպանութեան զոհերի փաստագրման եւ տուեալների հաւաքագրման բաժնի վարիչ, աւագ գիտաշխատող, Շուշան հաչատրուհեանը՝ Կ. Պոլսի պատրիարք «Չաւէն Տէր Երիպեանի ազգայնամ գործունէութիւնը Յայոց ցեղասպանութեան տարիներին» թեմաներով:

Յաջորդ կիստը վարեց Միհրան Միհասեանը: Կիստը նուիրուած էր հայոց փրկութեան գործում միջազգային կազմակերպութիւնների դերակատարութեանը: Չեկոյցներ կարողացին ՅՅԹ գիտական աշխատանքների գծով փոխտնօրէն, Երիտաւր Գոյնեանը՝ քննութեան առնելով միջազգային իրաւունքի զարգացման պարունակում հայ կանանց ու երեխաների փրկութեան հարցը, Լեփսիուսի տուն-արխիւի գիտաշխատող, Փոցատմի համալսարանի ռազմական պատմութեան ամպիոնի դասախոս, Ռոյ Զնուբե՛ն՝ ներկայացնելով 1920-ականների պաշտպանութեան հայ-ցորդ համը ժայռակէտ մարդաբանական օգնութեան ոչ այնքան լուր կոչի պարունակում, լիբանանահայ անկախ հետազոտող Կարօ Տէրունեանը՝ Եազգայ Զուլցերի հետեքրով թեմայով եւ Լեփսիուսի տուն-արխիւի գիտաշխատող, Յայկ Մարտիրոսեանը՝ խօսելով 1915-1919 թթ. հայերի փրկութեան գործում գերմանական առաքելութիւնների ունեցած ներդրումն մասին:

Երկրորդ միջազգային գիտաժողովի վերջին՝ թուով հինգերորդ կիստը նախագահեց Լարիտէ Մարգարեանը: Կիստը կրկին նուիրուած էր Յայոց ցեղասպանութեան տարիներին ազգայնամ գործունէութեանը: Չեկոյց կարողաց ՅՅԹ Յուշագրութիւնների, վաւերագրերի եւ մամուլի ուսումնասիրութեան բաժնի աւագ գիտաշխատող, Ռոբերտ Թաթայեանը՝ ներկայացնելով Կ. Պոլսի Յայոց պատրիարքարանի 1919-1922 թթ. կազմած վիճակագրութիւնները Մեծ եղեռնի որբերի թուաքանակի վերաբերեալ, 33 ՂԱԱ Պատմութեան հիմնարկի Յայկական հարցի եւ Յայոց ցեղասպանութեան պատմութեան բաժնի գիտաշխատող, Կարեն Յայրապետեանը՝ խօսելով Յայաստանի Զանրապետութեան արտաքին քաղաքականութիւնում արեւմտահայ փախստականների խնդիրների մասին: Եզրափակիչ զեկոյցով էլոյթ ունեցաւ ՅՅԹ Թանգարանային ցուցադրութիւնների կազմակերպման բաժնի աւագ գիտաշխատող, Թեմիւրէ Մարտոյեանը՝ «Վահան Չերազ. Յայոց ցեղասպանութիւնը վերապահած որբերի հաւաքագրումն ու ինսամակարութիւնն Ալեքսանդրապոլում» թեմայով:

Ինչպէս նախորդ օրը, կիստերին յաջորդում էր աշխուժ հարցուպատասխան, ծաւալում էր քննարկում:

Գիտաժողովի աշխատանքների ամփոփեցին ու նստաշրջաններն արտադրած յայտարարեցին ՅՅԹ տնօրէն Յարութիւն Մարութեանը եւ գիտական ջարտուողար Լարիտէ Մարգարեանը:

Նշենք նաեւ, որ գիտաժողովի երկրորդ օրը մասնակիցներն ու հիւրերը շրջայց ունեցան Մայր Աթոռում, այցելեցին վեհարան, ծանօթացան այնտեղ ցուցադրուող գանձերին:

Այսպիսով, գիտաժողովի նպատակն էր ներկայացնել Յայոց ցեղասպանութեան պատճառով տեղահանուած հայութեան քեկորների ճակատագրերը, լուսաբանել հայկական եւ միջազգային այն կազմակերպութիւնների, անհատների գործունէութիւնը, որոնք զբաղուել են հայ գաղթականների, մասնաւորապէս, երեխաների ու կանանց փրկութեան հարցերով:

Գիտաժողովին զեկոյցով հանդէս եկան Յայաստանի Զանրապետութիւնի եւ արտերկրից՝ Ֆրանսայից, Գերմանիայից, Լիբանանից, Միացեալ Նահանգներից, ժամանակ առնելով քան երկու տասնեակ գիտականներ, որոնք անդրադարձան Տեղասպանութիւնը վերապահած հայերի փրկութեան գործին առնչուող մանրամասներին:

Գիտաժողովի ընթացքում ներկայացուցին առաւելապէս հայկական, մասամբ նաեւ միջազգային կազմակերպութիւնների ունեցած դերակատարութիւնը, ինչպէս նաեւ հայկական հոգեւոր կառույցների, ազգապահպան կազմակերպութիւնների՝ Յայկական բարեգործական ընդհանուր միութեան, Միջազգային հայկական կազմակերպութիւնների գործունէութիւնը:

Մասնագէտները ներկայացրեցին կրեմլեան Յայաստանի նահանգներում իրականացուած հայահանութեան ներկայումս, անորոշործ կատարուեց նաեւ առանձին որբանոցների գործունէութեանը: Գիտաժողովի ընթացքում վեր հանուեցին նաեւ այն խնդիրները, որոնք առկա էին փրկութեան առաքելութեան իրականացման ընթացքում: Զննարկուեցին ինքնօգնութեան դրսեւորումներին, որբերի թուական տուեալներին, միջազգային իրաւունքի զարգացման պարունակում հայ կանանց ու երեխաների փրկութեանը, ինչպէս նաեւ՝ թեմային առնչուող մի շարք հարցեր:

Գիտաժողովի համագործակցից էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, հովանաւոր՝ Ամերիկայի Յայ աւետարանական ընկերակցութիւնը:

5 ԴԵԿՏԵՄԵՐ 1921. ՍԱՅԻՏ ՀԱԼԻՄ ՓԱՇՆԱՅԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ... «ԿՏԱԿՆ ԷՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ»

Դեկտեմբեր 5-ին, Իտալիոյ մայրաքաղաք Զոմի մէջ, հարուստ բնակիչներու առանձնատուններով յատկանշուող փողոցի մը վրայ, օր ցերեկով, հայ ժողովուրդի վրիճառու բազուկը արդար մահապատիժի ենթարկեց աւելի քան մեկուկէ միլիոն հայորդիներ ցեղասպանութեան ենթարկած Թրքական Մեծ Ոճիրին գլխաւոր պատասխանատուներէն՝ իթթիհատական կառավարութեան վարչապետ Սայիտ Յալիմ փաշան:

Ահաբեկիչը 21 տարեկան էր՝ Արշաւիր Շիրակեան անուն-մականունով: Սայիտ Յալիմ փաշան իթթիհատական Թուրքիան կառավարող եռապետութեան վարչապետն էր՝ մեծ վեզիրը (եպարքոս), որ ի պաշտօնէ եղած էր վաւերացնող թրքական պետութեան մշակած ու գործադրած Յայոց ցեղասպանութեան ծրագիրին:

Յեղասպանութեան ահաւոր ոճիրը գործադրութեան յանձնելու կառավարութեան կողմէն ընթացքին, ծրագրին մանրամասնութիւնները նմարկելու առեւ, Սայիտ Յալիմ ըսած էր. «Յայերը քաղցկեղի խոցի նման տարածուած են Օսմանեան կայսրութեան մէջ: Եթէ մենք խոցը արմատախիլ չընենք, անոնք մեզ հեղձմահութեան կը հասցնեն»:

Իսկ երբ փաշային հարցուցած էին, թէ՛ «քիչ մը դաժան չե՞ն հայերու բնաջնջման միջոցները», Սայիտ Յալիմ պատասխանած էր. «Եւ Թուրքիոյ ապագային մասին կը մտածեմ: Դուք չէք կրնար պատկերացնել իսկ, որ զալիք սերունդները մեզի որքա՞ն երախտապարտ պիտի ըլլան մեր այս հայրենասիրական նախաձեռնութեան համար»:

Թրքական կառավարութիւնը Յայոց ցեղասպանութեան ծրագիրը այսպիսի՝ ոճիրային ու թրջամուլ տրամաբանութեամբ հաստատած են գործադրութեան դրած էր Ա. Աշխարհամարտի նախօրէին, 1914-ի գարնանամասին, երբ Յին աշխարհը կը գալարուէր գաղթատիրութեան ճիրաններու մէջ, եւ ազգային ինքնորոշման ի խնդիր պայքարները իրարու դէմ հանած էին մէկ կողմէ՛ կայսերական ուժերը եւ միւս կողմէ՛ ազգային-ժողովրդային շարժումները: Ստատուտ համընդհանուր պատերազմը յարմարագոյն պահը նկատելով հայասպանական իր ծրագրին գործադրութեան համար՝ օսմանեան Թուրքիոյ պետական ղեկավարութիւնը շարժման մէջ դրաւ ոճրային իր բոլոր միջոցներն ու հնարքները՝ յանուն Յայկական հարցին «մեկնաճանկողմից ձեռքբացաւորել» իր իթթիհատական ցնորքին...

Թուրքիա պատերազմի մէջ մտաւ Գերմանիոյ կողքին եւ արեւելեան ռազմաճակատին վրայ ռուսական զօրքերուն հետ իր մղած կռիւները պարտուելով՝ պետականօրէն գործադրեց Յայոց ցեղասպանութեան ծրագիրը՝ նախ հայորդիներ թոնի տեղահան ընելով, ապա՝ ճամբու ընթացքին անզէն եւ անպաշտպան մեր ժողովուրդը կտորրելով:

Աշխարհամարտը արտառուցաւ կայսերական Գերմանիոյ եւ Օսմանեան կայսրութեան ցարսաբ պարտութեամբ: Իթթիհատական կառավարութիւնը տապալեցաւ, եւ անոր գլխաւոր դէմքերէն ոմանք քստորուեցան, իսկ ուրիշներ փախուտու տուին ղեկի Եւրոպա եւ... Կեդրոնական Ասիա:

Յաղթական Ռաշնակիցները սուլթանին պարտադրեցին զինուորական դատարան կազմել եւ, ի բացակայութեան, դատել իթթիհատական պարագլուխները:

Իրենց գործած պատերազմական ոճիրներուն եւ յատկապէս հայ, իոյն թէ ասորի ժողովուրդներուն դէմ իրենց գործադրած բնաջնջումի յանցանքներուն համար Թալէրէն եւ ընկերք դատապարտուեցան ծանրագոյն պատժի վճիռներու, որոնք սակայն մեռելու տուա մնացին...

Ի տես այդ բոլորին, իր անկախութիւնը նուաճած եւ Յայաստանի Զանրապետութեան իմբէտը ամրապնդող հայ ժողովուրդը, բնախաւքաբ, չէր կրնար անպատիժ ձգել հայասպանութեան պատասխանատուները:

Յայ ժողովուրդին հաւաքական կամը եւ մեր Լահատակներուն արդար վրեժի կտակը գործադրելով՝ Յայ ազգափոխական ռաշնակցութիւնը 1919-ին, Երեւանի մէջ գումարդուած իր 9-րդ Շնդիանուր ժողովին որոշեց կեանքի կոչել «Նեմեսիս» գործողութիւնը եւ անոր պատասխանատու մարմինին յանձնել հայասպանութեան պատասխանատուները ահաբեկելու համար՝ գալիս վսեմագոյն առաքելութեան իրականացումը:

«Նեմեսիս»-ի առաքելութեան ամենէն շնորհալից դրսեւորումներէն մէկը եղաւ, ահա՛, իթթիհատական կառավարութեան վարչապետին՝ Սայիտ Յալիմ փաշայի ահաբեկումը Արշաւիր Շիրակեանի ձեռամբ:

Յայոց ցեղասպանութեան պատասխանատու թրքական պետութեան ներկայացուցիչները պատուհասող ռաշնակցական արդարագործներու փաղանգին մէջ Արշաւիր Շիրակեան հանդիսացաւ այն իւրապէս ղեկը՝ որ իր առաքելութեան ազգային-քաղաքական ամբողջական գիտակցութեամբ եւ յանձնառութեամբ գործեց:

1973-ին իր աչքերը առյաւել փակած մեծագործ հայը՝ Արշաւիր Շիրակեան, 1965-ին, Մեծ եղեռնի յիսնամեակին առիթով, լոյս ընծայեց եւ հայ ազգային իշխուութեան ԱԽՄՆ յանձնեց իր յուշերը՝ «Կտակն էր Լահատակներուն» անունով, հայոց սերունդներուն փոխանցելու համար արեւուն տակ խորիտ կեցունածքով եւ բաց ճակատով քալելու եւ յառաջանալու անսպառ հպարտութիւնը:

Իր յուշերուն մէջ Արշաւիր Շիրակեան ահա այսպէս կը նկարագրէ Սայիտ Յալիմի ահաբեկումը. «Սայիտ Յալիմի վերջին օրը.

«1921, դեկտեմբերի 5: Առաւօտ շատ կանուխ դուրս ելայ սենեակէ: Նախորդ գիշերը մաքրած էի ատրճանակս եւ փամփուշտներն ալ՝ համրած:

«Թարմ-թարմ ածիլուած էի եւ լոզանք մը առած, ու ամբողջ կէս սրուակ օ տը ջոնկիայով մարմինս շփած էի: Ծերմակեղէններս միւնչեւ հազուատներս եւ գլխարկս, արթիսիս սեւ գլխարկս, կոսիւնտը. ուսանողի կամ արեւտագետի սեւ փողկապ մը դրած էի. կարծես հարսնիքի երթայի: Վերաբերուս վրաս՝ զացի փաշային դղեակին մօտերը՝ առանց Մ. -ին հանդիպելու: Վճռած էի այդ օրն իսկ գործը վերջացնել՝ առանց այլեւս մտածելու հետեւանքներու մասին:

«Ժամը ճիշդ 1:00-ին ինքնաշարժ մը կեցաւ փաշային դրան առջեւ. դուրս ելաւ Թեւֆիք Ազմիս եւ պայուսակ մը թեւին տակ՝ ներս մտաւ. քիչ վերջ փաշային հետ դուրս ելան եւ աճապարանքով մեկնեցան շատ կարեւոր գործի մը զուգու մարդոց երեւոյթով: Չմտահոգուեցայ. այնքան լաւ ուսումնասիրած էի երեւոյթները, որ վստահ էի, թէ ո՛ր ալ ըլլար, չէր կրնար իրաժարիլ իր յետմիջօրէն պոտոյտն եւ անպայման պիտի վերադառնար: Տրամաբանօրէն, առնուազ երկու ժամ պիտի ուշանար: Փութացի Վիլլա Բորգեզէ, ուր յաճախ կառքով, երբեմն ալ քալելով կու գար ան: Նոյնիսկ, օր մը, հետապնդումիս ընթացքին տեսայ, որ թիկնապահին զնէ տուաւ եւ մը խորոված շագանակ, փողոցի վրայ նստող շագանակավաճառէ մը: Ժամը 12:00-ին ատենները Մ. եկաւ ու հարցուց, թէ ինչ՞ն՞ ճաշի չէի գացած մեր ուսանողներուն ճաշարանը, ուր կէսօր եւ իրիկուն տովոր էինք հանդիպիլ:

«- Բորովհետեւ, - պատասխանեցի, - վճռած եմ այսօր էլս գործը զուլի հանել, ամէն պարագայի տակ եւ ամէն գնով: Տղայնացած էի փաշային ուշանալէն եւ քիչ մը ետ սպասեցի ու Գրիգորին ըսի. «Ես տան կողմերը կ'երթամ»: «Կլո՛ր», ըսաւ ու դուրս ելանք եւ քանի մը քայլ առի՛ր՝ դառնալու համար հանրակառքին փողոցը:

«Յասայ Վիա Նոմեստան, ուր հանրակառքը կեցաւ. իջայ եւ քալելով մտայ Օստակի փողոցը: Յանկարծ դեմ ցնուեցաւ Դեյեան: Ոստիկանի մը հանդիպումը այնքան պիտի չնէրէր գիւ, որքան՝ այդ սիրուն աղջկան ներկայութիւնը այդ պահուն: Տղային վիճակի մէջ պաղ վերաբերում մը ցոյց տուի: Մտերմները դարձած էինք, եւ աղջիկը կը գարմանար իմ անկակով պաղ վերաբերումէ: Տարօրինակ նայուածքով կը դիտեր, կարծես առաջին անգամ գիս տեսած ըլլար:

«Անպիտան աղջիկը կատարեալ հարցաքննութեան մը սկսած էր եւ բաժնուելու միտք չուներ: Ժամը 4:00-ին կը մօ-



տեսար: Փողոցին վարի կողմը նոր շէնքի մը շինութեան աշխատող բաւուրները աշխատանքէ կ'արձակուէին եւ, սովորաբար, այդ ամայի եղող փողոցին մէջ բազմութեամբ կար: Վարկեանէ վարկեան փաշան կրնար հասնիլ: Փողոցին խանգարիչ երթեւեկը ջբարէ կարծես, դեռ կար այս յամառ աղջիկը, որ անվերջ կը խօսեր ու կը ցրուէր ուշադրութիւնս:

«Եւ յանկարծ վերէն լսուեցաւ կարգի մը դողոյիւն: Մէկէն մարմնէս անծանօթ ասարտու մը անցաւ, երբ տեսայ իսկապէս ձերբ, որոնք բաշերը հովըն կ'ալեծփէին: Կառքին մէջն էր Սայիտ Յալիմ փաշան՝ իր թիկնապահին հետ: Փողոցին միւս ծայրը նայեցայ. Մ. դեռ հասած չէր: Վարկեանապէս «ցտեսութիւն» ըսի Դեյեային՝ պատուիրելով, որ շուտ ներս մտնէ, քանի որ «հայրս» կու գար...

«Անմիջապէս քալեցի միւս մայրը, որպէսզի լաւագոյն դիրքով մը ահաբեկումը կատարեմ, բայց քանի մը անկթաթ ուշացած ըլլալուս՝ քիչ մնաց ձիերու տակ մնայի. ձեռքս վերցուցի՛ր՝ բռնուցքս ցցած, ձիերը խրտչեցան եւ ծառայեցան: Կը իրարանցումիս մէջ արագ ոտսումով մը անցայ եւ ցատկէփ կառքին վրայ՝ կոխելով ոտնատեղին: Մէկ ձեռքով բռնեցի կառքին յենարանը, քիչ մը երերացի, բայց հաւասարակշռութիւնս կրցայ պահել: Միւն թիկնապահը կառապահին կը նայէր ու բաներ մը կ'ըսէր, երեւի հասկնալու համար ձիերուն խրտչիլը: Սայիտ Յալիմ փաշային աչքերը հանդիպեցան աչքերուս: «Երե՛ն», ըսաւ թիկնապահին: Այս եղաւ սատրագամին վերջին բառը: Աչքերը սարսափով լեցուն էին, երբ ատրճանակիս փողոց ուղղեցի աչք ընուցին եւ կրակեցի: Երկրորդ փամփուշտի մը հարկ չմնաց: Խռպուտ ձայն մը եւ փաշան նստած տեղէն տապալեցաւ կառքին մէջ, գլուխը իմ կողմս, զրեթէ ոտքերուն տակ: Կառքը դեռ կ'արշաւէր: Թեւֆիք Ազմիս, առաջին շփոթէն սթափած, ատրճանակ մը հանեց ու կը պատրաստուէր կրակել, երբ ատրճանակիս փողոց անոր ալ ճակտին ուղղուելով՝ գոռացի թուրքերէնով.

«- Աթ աշաղա, կեպերթիլըմ,- Նետե՛ գէնըր, կը սատկեցնեմ...

«Յնազանեցաւ եւ ատրճանակը կառքէն դուրս նետեց ահաբեկ դեմքով: Ատրճանակիս կողովը այս անգամ սկսայ հարուածել կառապահին կռնակին՝ պոռպոյլով խտալերէն. «Աքբետա, ասբետա». «Կեցի՛ր, կեցի՛ր»: Խեղճ կառապանը վախէն կը դողար եւ յուսահատական ճիչերով գիս վկայութեան կը կանչէր՝ ըսել ուզելով, «Տե՛ս, կեցնել կ'ուզեմ, բայց ձիերը չեն կենար»:

Կառապանը ցաշողեցաւ կեցնել ձիերը, որոնք վազքը շարունակեցին միւնչե փաշային տան առջեւ եւ ինքնաբերաբար կանգ առին: Դրան առջեւ կռնակի կռնակ ծառան մեքենաբար ձեռքը ճակտին տարաւ: «թեմենաւ» ընելու ձեռով, բայց փաշային ինկած գլուխը տեսնելով՝ այդ դիրքին մէջ քարացած մնաց, ապշապար: Առանց կարեւորութիւն տալու ծառային՝ վար ցատկեցի կառքէն եւ ատրճանակս ցցած թետուկ լայն շարժում մը ձեռքի շուրջը՝ թե՛ սարսափ ձգելու եւ թե՛ փախուտիս ուղղութիւնը որոշելու համար...

Արշաւիր Շիրակեանի յանձնարարուած միակ գործը չէրաւ իթթիհատական կառավարութեան վարչապետին ահաբեկումը:

Դաշնակցական ընտանիքի մէջ մեծած, Մեծ եղեռնի արհաւիրքը 15 տարեկանի իր զարիւրած աչքերով տեսած ու ապրած եւ 18 տարեկանին Դաշնակցութեան անդամագրուած գաղափարապաշտ մարտիկ էր Ա. Շիրակեան: Երբ 33 Դաշնակցութիւնը տուաւ «Նեմեսիս»-ի որոշումը եւ յատուկ պատասխանատու մարմին մը յառաջացուց գայն գործադրելու համար, Շիրակեան առաջիններէն եղաւ այն երիտասարդ ռաշնակցականներէն, որոնք կամարը ներկայացան, որպէսզի արժանանան վրիճառուի պատուին եւ ընդգրկուին արդարահատոյց ընտրեալներու փաղանգին մէջ:

Շիրակեան վատահուրթիւ ներշնչող կեանքագիր ուներ եւ արժանացաւ ահաբեկիչի կոչումին:

Արշաւիր Շիրակեանի ահաբեկութեան մկրտութիւնը կատարուեցաւ Պոլսի տիրապետիչ հայ մատնիչին՝ Վահե Իհասնի (Տայեան) ահաբեկումով: Դետեցեաւ Սայիտ Յալիմ փաշայի ահաբ

Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ

Խոյ (21 մարտին 20 ապրիլ)
Չգայուն կ'երեւի կարգ մը քննադատություններու հանդէպ: Գալիք օրերը յարմար չեն դիմադրութիւններու եւ վիճաբանութիւններու: Մի՛ վատնէք ձեր կարողութիւնները՝ գոհացելով ուրիշները:

Ցուլ (21 ապրիլէն 21 մայիս)
Կարեւոր որոշումներ մի՛ տաք այս օրերուն: Յին ընկերներու հետ կապ պիտի հաստատէք եւ ինչ դէպքեր պիտի վերլուծէք: Բնութեան գիրկը հաճելի ժամանակ պիտի անցընէք: Յին գիրք մը պիտի կարդաք:

Երկուորեակ (22 մայիսէն 21 յունիս)
Առիթ պիտի ունենայ հանգչելու հոգեք: Լիւրձակ հարցերով պիտի զբաղիք: Ձեր տրամադրութիւնը խանգարուած պիտի ըլլայ այս շրջանին: Յանգստացէք եւ ժամանց ժամանակ տրամադրեցէք:

Խեղդեանի (22 յունիսէն 23 յուլիս)
Պիտի ունենայ անողջական հարց մը, գոր պէտք է դարմանէք: Կերտնացումով եւ հանդարտութեամբ պիտի լուծէք ձեր առջեւ ծառայած խնդիրները: Չգայուն շրջան մըն է. ձեզմէ կը խնդրուի արթուն եւ զգոյշ ըլլալ:

Անիծ (24 յուլիսէն 23 օգոստոս)
Անհասկացողութենէ հեռու մնացէք: Պիտի պահեցէք ձեր ստացուածքները եւ ունեցուածքները: Քիչ մը պիտի յուսահատիք, բայց չոր ծրագիրներ պիտի մշակէք: Մանկութեան ուրախ եւ հանգիստ օրեր պիտի վերապրիք:

Կոյս (24 օգոստոսէն 23 սեպտեմբեր)
Նոր հորիզոններ պիտի բացուին ներդրումներ կատարելու: Չգացական գեղեցիկ պահեր պիտի ապրիք: Անձնական գետնի վրայ ուրախ երազներ պիտի ունենայք: Եթէ ձեր սիրտը գրասե՛՛ք, սիրտին նոր յարաբերութիւն մը պիտի ապրիք:

Կշիռ (24 սեպտեմբերէն 23 հոկտեմբեր)
Օգտուեցէք դրական մեթոդներէ՝ դիտարկելու ձեր կարողութիւնները: Ձեր փափագը պիտի իրականանայ: Նոր սկիզբ մը պիտի դնէք ձեր գործին եւ անձնական կեանքին մէջ: Նոր տուն տեղափոխուելու մասին կը մտածէք:

Կարիճ (24 հոկտեմբերէն 23 նոյեմբեր)
Մեծ ժողովրդականութիւն կը վայելէք: Դեպք մը առիթով լուսարձակները ձեր վրայ պիտի կեդրոնանան: Ծամբորդութիւն մը պիտի կատարէք: Սիրային գեղեցիկ պահեր պիտի ապրիք:

Աղեղնատը (24 նոյեմբերէն 21 դեկտեմբեր)
Ձեր հարազատներն մէկը իր դիրքին շնորհիւ ձեզի պիտի օգնէ: Յամբերող եղէք այս օրերուն: Մի՛ գնէք այն առարկաները, որոնք այնքան ալ պէտք չեն ձեզի, խնայողութեան ժամանակն է:

Այծեղջիւր (22 դեկտեմբերէն 20 յունուար)
Նոր լուծումներ որդեգրելով՝ բաւական շահ պիտի ապահովէք: Պիտի յաջողիք դիմագրաւել ձեր ռոտարութիւնները: Ձեր ընկերներէն մէկուն հանդէպ ձեր վստահութիւնը պիտի կորսնցնէք: Մի՛հատնէք մարդիկ, եթէ չէք աշխատած անոնց հետ:

Շովկանուշ (21 յունուարէն 19 փետրուար)
Եթէ զգաց, որ ձեր միտքերը չեն համապատասխաներ իրականութեան, հրաժարեցէք անոնցմէ: Երկուսին մը պիտի պատահի, եւ նոր լուր մը պիտի ստանայ աշխատանքային ու զգացական գետնի վրայ:

Ձուլ (20 փետրուարէն 20 մարտ)
Աշխատանքային եւ անձնական ժամադրութիւնները մի՛ յետաձգէք: Անձնական գետնի վրայ հարցեր պիտի ծագին: Վիճաբանութիւններէ հեռու մնացէք եւ ձեր հանդարտութիւնը պահեցէք: Ձեր ընկերներէն մէկուն հետ ձեր կապը պիտի խզէք:

1969 - 2019 9 ԴԵՏԵՄԲԵՐ

ՄԵՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԻ ՇՈՒՐՉ ԶՐՈՅՑԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Ազգային վարժարաններու շուրջ կատարուած մեր հարցախոյզերով վերջերս առիթը ունեցանք, ուրիշ հարցերու կարգին, յուզելու նաեւ հայերէնի ուսուցման խնդիրը: Փաստերը ամառկայական էին ու անողոր: Մեր հարցապարտումներն ի յայտ կու գայ, որ, նախակրթարանի մակարդակին արդէն, մեր վարժարաններուն յաճախ կը պակաս անհրաժեշտ որակի տեր հայերէնի ուսուցիչ: Կը ստուգենք, միւս կողմէ, որ դպրոցական եւ դասարանային գրադարանները կը գտնուին անհարկաւնեղի վիճակի մէջ, եւ որ՝ աշակերտը շատ քիչ կը կարողայ հայերէն գիրք, ուսումի նիւթերու ոչ բանական դասաւորումին ու խճողումին պատճառով: Կը հաստատենք ապա, որ այս թերիւնը, առնուազն՝ Նոյնքան շեշտօրէն, կը դիտուին մեր միւս վարժարաններու գրեթէ բոլորի պարագային, ներառեալ՝ արտարանական եւ կաթողիկէ համայնքներու վարժարանները. ասիկա ալ բացայայտօրէն կ'երեւեր մեր կատարած խորազգիտումներու արդիւնքին մէջ:

Երկրորդական վարժարաններու պարագային, հայերէնի ուսուցման հարցը կը ստանայ արեւի լուրջ ու ծանրակշիռ բնոյթ: Արդարեւ, որքան ալ նախակրթարանի հինգ-վեց տարիները կարեւորութիւն ունենան տղոյ ընկալումի դրութեան ու հոգեկան ամբողջ աարքի կազմաւորման մէջ, այսուհանդերձ, երկրորդական ուսման տարիներն են, որ մուտք կու տան անոր՝ գաղափարներու եւ վերացական արժեքներու աշխարհէ մը ներս. կու տան անհրաժեշտ ու վերջական կողմնորոշում մտաւորական գծով:

Յարցի այս կարեւորութիւնը մեզ մղած էր վերապահութեան, եւ մեր հարցախոյզը սահմանափակած էինք նախակրթարաններու ճիւղին մէջ: Երկրորդական վարժարանները, եւ մասնաւորաբար հայերէնի ուսուցման հարցը երկրորդական վարժարաններու մէջ, կը պահանջէին առանձին խորազգիտում, առանձին հարցարում: Եւ, ահա, պիտի ուզէիք հոս գոնէ ուրուագծել այդ հարցարումը, զայն ուղղել առաջ, յառաջիկային, մեր երկրորդական վարժարաններու աշակերտութեան ու հայերէնի ուսուցիչներուն:

Նախ՝ կը դրուի՝ միջնակարգի ու երկրորդականի մէջ հայոց լեզուի ու գրականութեան ուսուցման հարց, այնպէս՝ ինչպէս փաստացի կերպով կը հաստատենք ասիկա նախակրթարաններու մէջ:

Առարկայական փաստերը չեն պակսիր այդ հարցի, այդ տազնապի՛ մասին խօսողը: Անկախ մեր մամուլի մէջ պարբերաբար երեւցող ահազանգիչ յօդուածներէ՝ այդ տազնապին անմիջական արտայայտութիւնը կը գտնենք ըլլա՛յ աշակերտական հրատարակութիւններու, ըլլա՛յ միջոցառողական մրցանքներու առթիւ գրուած շարագրութիւններու, ըլլա՛յ երկրորդական վարժարաններու տարեկան հունձքի «հայագիտական» դիմագիծին

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

- ԳՐՈՒՇՈՆԱԿԱՆ**
- Չղիչկ - Յուցական ածական:
 - Գարթող թռչուն - Արաբական օրաթերթ:
 - ԼՕԽ-ի մասնաճիւղերէն - Շրջուած՝ կանաչորակ պատուական թար:
 - Փխտական մասնիկ - Արաբական կուսակցութիւն - Կայրի արու ոչխար:
 - Արաբական մայրաքաղաք - Կարճ թուր:
 - Հրասանդ - Չայնականի:
 - Կրտսերիչ:
 - Հանդերձի ներքին կտու - Անիծ:
 - Սպանացի պարոն - Ափական երկիր:
 - Մեղմ հով - Այբուբենէն - Լծորդութիւն:
 - Ապառաժ - Նուագարանի լար:

ՈՐՂԱՅԱՅԵԱՏ

- Կողով - Ռամկօրէն՝ այր՝ - Չայնականի:
- Երեւել - Բազմի:
- Կուր - Արական անուն:
- Արտէ - Երկաթի երկերէն:
- Թիփուլիի շրջանները - Արու ուղտ:
- Վարդագոյն ծաղիկներով մշտադպար թուփ - Թէ որ:
- Կորովաթիք, քաջատես - Ելեկտրական միւտր:
- Այլ խօսքով - Մովսէ Յարութեանի գրչանունը:
- Յետը - Իզական օտար անուն:
- Հատնիկ - Օսմանեան նահանգապետ:
- Կրկնուած ձայնաւորներ - Պատկերազարդ:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

	8		9		7
6	2		7		3
			8		4
		5			
9				2	3
	5	6	4		9
4			5	6	7
	1	9			8
		3			6

- ՅՐԻՊՈՆԱԿԱՆ ԵՒ ՈՂՂԱՀԱՅԱՅ 9 շԱՐՔԵՐՈՎ ԵՒ ՍԻՆԱԿՆԵՐՈՎ (9x9) կազմուած գծացանց բաղկացած է իւրաքանչիւր 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիի իւրաքանչիւր բաժին ունենայ 1էն 9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ո՛չ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինի մէջ: Սկսելու համար՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:**

ՆԱԽՈՐԻ ԺԱՄԱՆՅԻ ՆԱԿԵՐՈՒՆ ԼՈՒՌՈՒՄՆԵՐԸ

	Կ	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
1	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
2	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
3	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
4	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
8	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
11	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս

ՆՈՒՇԵՐ ՈՒ ՆԵՏԵՐ

ԶՐՈՅՑ՝ ՊՐՈՒՆԵՏ ՊՈՒՆԵՏԻ ՄԸ ՀԵՏ

- Հանդիպեցայ ողբալեւ հայրենակիցի մը, որ վաթսուներե տեղը սկսած էր կադ, կոյր, կուգ աշուղական ոտանաւորներու ծնունդ տալ՝ պրոլետարական նիւթերով:
- Յարկուէ եւ, որ երկու հարիւր քանակութեամբ սկսաւ խօսիլ եւ ըսաւ:
 - Պրոլետարական պրոլետարիւնը պիտի վերածեն: Ո՛չ մէկ խօսիչի, ո՛չ մէկ լուր միջեւ հիմա...
 - Բայց քու ոտանաւորներդ գիրքի վերածուած են այնտեղ ու սպառած: Միայն թէ...
 - Ինչէր կ'ըսես... «Միայն թէ» ի՞նչ...
 - Գիրքին անունը փոխած են, ու անունանձ «Լուսաբացի կազմակերպ...»
 - Անունէն բան մը չ'ըլլար... Ատ ի՞նչ հրաշալի արտիստ տուիր: Ըսել է առանկ... Բայց օրինակ մը գոնէ ինծի դրկելու չէի... Մասնաւորն որ, կըքսեալայրս եղած են. ա՛յ թէ՛ ազգակից եղ, թէ՛ ազգակալ:
 - Գիտե՞ս, ոտանաւորներու վերնագիրներն ալ փոխած են...
 - Ատ ալ հոգ չէ. անունէն բան չ'ելլեր... Կարեւորը գործն է... Ո՛ր գրավածառին քով կրնամ գտնել ու գնել գիրքս...
 - Բայց գիտե՞ս, ոտանաւորներու վեզուն ալ փոխած են...
 - Լեզուն բան չ'ելլեր... Անոց լեզուն ալ հայերէն է, մասնաւոր պետական լեզու է, արեւի ազդեցիկ, արեւի տպաւորիչ... Մեր արեւմտահայերէնը եթէ գաւառաբարբառ ալ չէր, հիմա եղաւ. գաւառաբարբառէն արեւի գիտաբարբառ եղաւ եւ ուրիշներուն ծովերուն մէջ սկսաւ թափիլ ու կորսուիլ: Ծառ լաւ ըրած են լեզուն փոխելով:
 - Սակայն, գիտե՞ս, ոտանաւորները ալ փոխած են ամբողջութեամբ:
 - Հարկաւ թիչ մը պիտի սրբագրեն, կարգի դնեն, յարդարեն, տաշէին:
 - Ո՛չ, ո՛չ, բոլորովին կործանուած են:
 - Ի՞նչ...
 - Կեցի՛ր. դեռ ատով ալ չեն գոհացած: Անունը ու մականունը ալ փոխած են...
 - Եղբա՛յր, ամէն բանի մասին կը մտածեն մերիները, Գիտեմ, թէ ինչն'ու անուն ու մականունն փոխած են, որպէսզի ես հոս չվտանգուիմ:
 - Կրնայ ըլլալ:
 - Անանկ է, վտտահ եմ: Ե՛, դուն ան ըսէ, որ հիմա ի՞նչ է իմ գրական կեցճանունս: Եղբա՛յր, բնական բան է, որ գիտեմ ստանունս, որպէսզի երբ քննադատները խօսին, գիտեմ, թէ իմ մասին է, որ կը գրեն:
 - Կը կոչուիս Գառնուկ Գայլունի:
 - Հա՛, հա՛, հա՛... Թե՛ գառնուկ եմ, թե՛ գայլ ունիմ... Ե ճիշդ է... Թե՛ միամիտ, թե՛ խորագետ... Բայց անկարծելի չափազանց փոփոխութիւններ կատարած են...
 - Գիտե՞ս, այնտեղ կուսակցական յարատեւ փոփոխութիւններու աշխարհ է, կուսակցական կործանութիւններու մեծատարած երկիրն է: Թու գիրքը տեղ հասած օրերուն փոփոխութիւնները եւ կործանութիւնները հասած էին իրենց սաստկագոյն աստիճանին: Ձեռագիրները վստահաբար չորս-ինչ քննադատներու ձեռքերէն անցած են: Ու ամէն մէկը բան մը փոխած է. մէկը գիրքին անունը, միւսը ոտանաւորներուն վերնագիրները, ուրիշ մը լեզուն, չորրորդ մը՝ բուն իսկ ոտանաւորները, վերջապէս՝ անուն մականունը...
 - Բայց բոլոր այդ փոփոխութիւններէն յետոյ, դուն ինչպէ՛ս հասկցար, որ տպուածը իմ գիրքս է...

- Ոճը հասկցայ: Ոճը պահուած է իր ինքնատիպ հարազատութեամբ:
- Ուրեմն ես ո՞ճ ունիմ...
- Չարմանալի չեմ գտներ, որ անգիտաստան ոճ ունենալը:
- Բայց ոճիդ չե՞ միայն ոճը պահելը:
- Ոճիդ անգամ իր ոճը ունի: Եւ ոճը կը յայտնէ ոճագործը:
- Դուն ան ըսէ, թէ «Լուսաբացի կազմակերպ»-ս ուրկե՞ կրնամ ճարել...
- Ըսի, որ տեղույն վրայ ինչոյն սպառած է՝ հակառակ երեսուն հազար տպաքանակին:
- Դուն ինչպէ՛ս կարողացիր...
- Գործիդ մասին երեւցած գրադատականը կարողացի ես, «Սովետ. Հայաստան»-ի մէկ թիւն մէջ: Այդ թիւն ալ չեմ պահած, որ քեզի տամ: Մեջբերումներ կային ոտանաւորներէ:
- Հիմա ի՞նչ ընեն... Խորհուրդ մը տուր ինծի...
- Ահա. կարծեմ եթեանտեսուղ անցուցած են՝ խորհուրդ կու տամ քեզի ոտանաւոր քալել, ոտանաւոր պարել, Նոյնիսկ ոտանաւոր հարուածել, բայց՝ երբեք ոտանաւոր չգրել:
- Բայց ոտանաւորը իմ հոգիս է:
- Հոգի մը շատ բան կրնայ ըլլալ, բայց հոգի մը երբեք ոտանաւոր կամ ոտնաւոր չ'ըլլալ:
- Աշուղ-պուլտին հանդիպած ատենս իր դէմքին վրայ ողբ կար: Իրմէ բաժնուած ատենս տեսայ, որ իր դէմքը եղած էր ողբալայր, ու իր երեսներուն վրայ դրոշմուկ սկսած էին աշխարհի բոլոր կործանած քաղաքներուն արեւակները:
- Եւ բութը կը վայելին:

ԿԻՐԱԿԻ, 15 ԴԵԿՏԵՄԵՐԻՆ

ՃԱՏՐԱԿԻ Ս. ԾՆՆԳԵԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ՝ ՖԵՐՆ ՇԸՊՊԵՔԻ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԵՉ

Հովանավորությամբ Ֆրեն Շոպպեյի քաղաքապետության, կազմակերպության Ֆրեն Շոպպեյի Ֆրեր Նորթ Տամ վարժարանին ճատրակի յանձնախումբին եւ հսկողությանը Լիբանանի ճատրակի ֆեդերասիոնին, կիրակի, 15 դեկտեմբերին տեղի պիտի ունենայ Ս. Ծննդեան ճատրակի 21-րդ տարիքային մրցաշարը:
Մրցումներուն ազդանշանը պիտի տրուի կեսօրէ առաջ ժամը 11:00-ին:
Արձանագրութիւններուն համար կարելի է կապ հաստատել լիբանանցի միջազգային իրաւաբար Էլի Խեյրալայի հետ (հեռ. 03-883225):

«ԷՆ. ՊԻ. ԷՅ.»

- ՊԱԹԼԵՐ ԵՒ ՈՒԵՍԹՊՐՈՒՔԻ ԹՐԻՓԸԼ ՏԱՊԸԼԻ ՀԵՂԻՆԱԿ - ՈՒՌԻԵՐԶԻ 5-ՐԳ ՅԱՂԹԱՆԱԿԸ

«ԷՆ. ՊԻ. ԷՅ.»-ի պատշաճօրէն օրհնականութեան ծիրին մէջ, նախորդ շաբաթավերջին կատարուեցան բաւական հետաքրքրական ճակատամարտեր:

Միլուոքի Պաքս (արեւելեան շրջան) եւ Լոս Անճելըս Լեյքըրզ (արեւմտեան շրջան), որոնք կրած են երեքական պարտութիւն, արձանագրեցին տարեշրջանի իրենց 20-րդ յաղթանակը՝ յաջողաբար Լոս Անճելըս Բլիփըրզի (119-91) եւ Փորթլենտ Թրէյլ Պլեյզըրզի (136-113) դէմ:

Լեյքըրզէն 39 կէտ նշանակեց Անթոնի Տեյվիս, մինչ Պաքսէն 27 կէտ՝ Ճիանիս Անթոնիոս:

Մայքէլ Զիթ 112-103 արդիւնքով յաղթեց Ուաշինկթըն Ուիզըրտ-ճիւն: Յարթական կազմէն ճիւղի Պաքսը թրիփլ տապալը մը իրագործեց (28 կէտ, 11 ռիպայուստ, 11 էսիսթ):



Ճիւղի Պաքսը

Իր կարգին, թրիփլ տապալի հեղինակ դարձաւ Զիլուսթըն Ռոքեթցին մաս կազմող Ռասըլ Ուեսթպորուք (24 կէտ, 14 ռիպայուստ, 11 էսիսթ)՝ Ֆենիքս Սանզի դէմ արձանագրուած յաղթանակին ընթացքին (115-109): Անոր խմբակից Ճեյմս Զարտեն նշանակեց 34 կէտ, մինչ Սանզեն Տեյնի Պուքըր՝ 35 կէտ:



Ռասըլ Ուեսթպորուք

Կոլտըն Սթեյթ Ուորիըրզ արձանագրեց տարեշրջանի իր 5-րդ յաղթանակը (19 պարտութիւններու կողքին)՝ 2 կէտի տարբերութեամբ միայն (100-98) պարտութեան մատնելով իր հիւրը՝ Շիքագո Պուլզը:

«ՊՈՒՆՏՆԸԼԻԿԱ»

ՊԱՅԷՐՆ ՄԻՆԻՆԻՆ ՊԱՐՏՈՒՅԱԿ ՄԵՕՆԸՆԿԼԱՏՊԱՆԻ ԳԼՇԻՆ ՎՐԱՅ. ՏՈՐԹՄՈՒՆՆՆՆԻ 5-ՐԳ ԱՐԳԻՆՔՈՎ ՅԱՂԹԱՆԱԿԸ



Գերմանիոյ ֆութպոլի օրհնականութեան՝ «Պունտըսլիկա»-ի 14-րդ հանգրուանին ծիրին մէջ տեղի ունեցած գագաթի ճակատամարտին, Պորուսիա Մէտշընկլատպախ 2-1 արդիւնքով յաղթեց իր հիւրին՝ երկրի գործող օրհնական Պայերն Մինխիխը՝ 54 հազար հանդիսատեսներու ներկայութեան:
Շար.ը՝ էջ 10

ՔՈՎԱԶ ԿՈՒՁԷ ԳԼԽԱՒՈՐԵԼ ԱՐՍԵՆԱԸ

Պայերն Մինխիխի նախկին մարզիչ Նիքո Զովազ փափաք յայտնած է գլխաւորել լոնտոնեան Արսենալը:



Նշուեցաւ, որ անոր ներկայացուցիչները այս գծով կապ հաստատած են անգլիական ակումբին ղեկավարութեան հետ: Ան այժմ որեւէ խումբի մարզիչ չէ:

ՊԱՏԵՊՊՈԼ

ԼԻԲԱՆԱՆԻ 16 ՏԱՐԵԿԱՆԵՆ ՎԱՐ ԱՂԶԿԱՆՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ՄԵԿՆԵՑԱԿ ՍՈՒՐԻԱ



Իր մասնակցութիւնը բերելու համար Արեւմտեան Ասիոյ պատշաճօրէն առջկան 16 տարեկանէն վար օրհնականութեան, Լիբանանի ազգային խումբը նախորդ շաբաթավերջին մեկնեցաւ Սուրիա:
Լիբանանի ազգային խումբին մարզիչն է Չիատ Նաթուր:
Այս օրհնականութեան Լիբանանէն բացի կը մասնակցին նաեւ Իրաք եւ Սուրիա:

«ԼԱ ԼԻԿԱ»

ՄԵՍՍԻ ՀԵԹՐԻՔԸ ԵՒ ՊԱՐՍԵԼՈՒՆԱՅԻ ՎԱՏԱՀ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Սպանիոյ ֆութպոլի օրհնականութեան՝ «Լա լիկա»-ի 16-րդ հանգրուանին ծիրին մէջ, պարագլուխի դիրքին վրայ գտնուող Պարսելոնա վատի յաղթանակ մը արձանագրեց, երբ 5-2 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Մայորքան:



Յարթական կազմին կողմէն նշանակեցին Անթոնի Կրիզման (7-րդ), Լիոնել Մեսսի (17-րդ, 41-րդ եւ 83-րդ) եւ Լուիս Սուարեզ (43-րդ):
Իր իրագործած այս հետիոտնի շնորհիւ, Մեսսի գերազանցեց Ռեալ Մատրիտի նախկին յառաջագահ Զինիսթանո Ռոնալտոն, որ «Լա լիկա»-ին մէջ իրագործած էր 34 հետիոտն:
Շար.ը՝ էջ 10

«ՓՐԵՍԻՏԵՐ ԼԻԿ»

ՄԱՆՉԵՍԹԵՐԻ ԵՌՆԱՅԹԸՍ ԱՒԵԼԻ ԶՕՐԱՒՈՐ ԷՐ ՄԱՆՉԵՍԹԵՐԻ ՄԻԹԻԷՆ

Անգլիոյ ֆութպոլի օրհնականութեան՝ «Փրեսթեր լիկ»-ի 16-րդ հանգրուանին ծիրին մէջ տեղի ունեցան Մանչեսթըր քաղաքի տեր-պիս, որուն ընթացքին Սիթիի հիւրընկալեց Եունայթեդը՝ իթիփիատի մարզադաշտին վրայ:



Անցի քան 54 հազար հանդիսատեսներու ներկայութեան, յաղթանակ արձանագրեց Եունայթեդը, որ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Սիթիին: Մարքուս Ռեշֆորտ (23-րդ) փենալթիով եւ Անթոնի Մարթիալ (29-րդ) նշանակեցին Եունայթեդի կոլերը, իսկ Նիքոլա Օթամենտի՝ Սիթիի ուշագած կըրը (85-րդ):
Այս պարտութիւնը Եունայթեդի կազմին համար եղաւ տարեշրջանի չորրորդը:
Իր կրած այս պարտութենէն ետք, Սիթի այժմ 14 կէտով ետ է պարագլուխի դիրքին վրայ գտնուող եւ ցարդ անպարտելի Լիվըրպոլէն, որ 3-0 արդիւնքով յաղթական վերադառնալէն ետք Պուլընտաութի դաշտէն, ունեցաւ 46 կէտ:

Լիվըրպոլի երեք անպարտական կոլերը նշանակեցին Ալեքս Օքսլէյտ - Չեմսըր-Լէյն (35-րդ), Նապի Բեյթա (44-րդ) եւ Մուհամետ Սալահ (54-րդ):
Իր կարգին, յաղթանակ մը արձանագրեց Եունայթեդը՝ Սիթիի դէմ: Եունայթեդը 5-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Պըրլին: Զերի Բեյն տուպլ մը իրագործեց:
Չեմսըր կրեց տարեշրջանի իր 5-րդ պարտութիւնը՝ Էլըրընի դաշտին վրայ (3-1):

«ԸՍԼՉԻՕ»

ԵՌՆԱՅԹԸՍ ԿՐԵՑ ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Իտալիոյ ֆութպոլի ա ի յ ո յ է ա ն ո լ թ է ա ն ՝ «Ըսլչիօ»-ի 15-րդ հանգրուանին՝ ծիրին մէջ, երկրի գործող օրհնական Եունայթեդը, ուր Դոմինիկ Օլիվիի-քոս» մարզադաշտին վրայ հիւրը եղաւ Լացիո Ռոմային, կրեց տարեշրջանի իր առաջին պարտութիւնը՝ 3-1 արդիւնքով:



Եունայթեդի միակ կըրը նշանակեց Զինիսթանո Ռոնալտո (25-րդ), մինչ անոր խմբակից Կուստո Զուարտո 69-րդ վայրկեանին կարմիր քարտ մը ստացաւ: Անոր դաշտէն վտարուէն ետք հիւրընկալ խումբը նշանակեց 2 կոլ:
Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, Լացիո մը արձանագրեց իր հիւրին՝ Ա. Է. Ռոմային հետ:
2-րդ դիրքին վրայ գտնուող Եունայթեդը իր տրամադրութեան տակ ունի 36 կէտ:

ՃԱՏՐԱԿ

ՉԱԼԵՆ ԱՆԳՐԵԱՍԵԱՆ՝ ԵՒՐՈՊԱՅԻ ՓՈԽԱԽՈՅԵԱՆ

Եսթոնիոյ մայրաքաղաք Թալինի մէջ տեղի ունեցած Եւրոպայի կայծակնային ճատրակի անհատական օրհնականութեան, Գայաստանի հաւաքականի անդամ Չալեն Անդրեասեան տիրացաւ փոխախօյեանի կոչումին՝ առաւելագոյն 22 կէտէն ապահովելով 17 կէտ:



Նոյն արդիւնքը արձանագրեց լրացուցիչ ցուցակի միջոցով օրհնական հանդիսացած ռուս Իկոր Լիսի: Պրոնզէ մետալին տիրացած ռուս Անտրէ Եսիփենցուն եւս արձանագրեց նոյն արդիւնքը:

Արագ ճատրակի Եւրոպայի օրհնականի կոչումը սուս-ճած Գաբրիէլ Սարգսեան կայծակնային այս օրհնականութեան 15 կէտով գրաւեց 18-րդ դիրքը:

ՃԱՏՐԱԿ. «ԿՐԱՆՏ ԶԵՍ ԹՈՒՐ»

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆ ԳՐԱԽԵՑ ԶՈՐՐՈՐԳ ԳԻՐՔԸ



Լոնտոնի մէջ տեղի ունեցած ճատրակի «Կրանտ ցես թուր»-ի աւարտական հանգրուանին ծիրին մէջ, հայկական ճատրակի յառաջատար Լեւոն Արոնեան գրաւեց չորրորդ դիրքը:
Շար.ը՝ էջ 10

ՍՊԱՆԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԽՈՒՐԻՆ ՍԱՆՉԵՍ՝ ՀԵԹՐԻՔ ԻՐԱԳՈՐԾԱԾ ԱՄԵՆԷՆ ՏԱՐԻՔՈՏ ՖՈՒԹՊՈԼԻՍԱԸ



Ռեալ Պեթիսի միջնապահ Խուրին Սանչես երկ դարձաւ Սպանիոյ ֆութպոլի օրհնականութիւններու պատմութեան մէջ հետիոտն իրագործած ամենէն տարիքոտ ֆութպոլիստը:

Անոր կազմը 3-2 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց Աթլետիքոս Պիլլայայի դէմ: Ան իր կոլերը նշանակեց 18 վայրկեանի ընթացքին (2-րդ, 11-րդ եւ 20-րդ):
Սանչես (38 տարեկան եւ 140 օր) այսպիսով գերազանցեց Ռեալ Մատրիտի նախկին յառաջագահ Ալֆրեսո Տի Սթեֆանիոյ սուսճումը, որ հետիոտն իրագործած էր 1964-ին (37 տարեկան եւ 255 օր):
Սանչես 2000-էն 2007 մաս կազմած է Սպանիոյ ֆութպոլի ազգային խումբին:

ՍՎՈՎՏԻՍԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ՍԵԼԹԻՔ՝ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԱԿԻՐ



Սկովտիոյ ֆութպոլի լիկայի բաժակի մրցաշարին ծիրին մէջ, երկ տեղի ունեցած Ռեյնջըրզ - Սելթիք ճակատամարտում աւարտեցաւ 1-0 արդիւնքով՝ ի նպաստ Սելթիքի: Մրցումին միակ կըրը նշանակեց Զինիսթանո Քիլիսեն (60-րդ), մինչ անոր խմբակից Տերեմի Ֆրիմիլոն 63-րդ վայրկեանին կարմիր քարտ մը ստացաւ:
Այսպիսով, Սելթիք, որ յաջողաբար չորրորդ տարին ըլլալով դարձաւ տիտղոսակիր, իր պատմութեան մէջ 19-րդ անգամ ըլլալով բարձրացուց այս տիտղոսը:
Մրցակիշը սակայն կը պատկանի Ռեյնջըրզի (27 անգամ):

